

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

53^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ



ԹԻԻ 49



6 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1903

ԳԻՏԱԿԱՆ ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու Մխիթարեաններ. «Քաջունի եւ Գարագառ». Ս. ԱՆԳԵՂԵԱՅ.—Շաբաթը. Տ. Ա.—Հեռագրի Սրբնոր (Իր մանուկն առիքով) ԵՐՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ.—Սալոնի առուիսներ. Նուերներ. ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ.—Հոգեկան նրբութիւններ (Բանաստեղծութիւն) ԱԼՊԷՌ՝ ՍԱՄԷՆ. քարզմ. ՓԱՅԼԱԿ.—Սիրերգութիւն. Մ. Ա. ՊԱՐՄԱՄԵԱՆ.—Բանուալա-
իվանովիչ (Վեպ) ԲԻԷՌ ԼՕԴԻ. քարզմ. ԶԻՖԹԷ—ՍԱՐԱՅ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթերի տարեկան բաժանորդագրին է Կ. Պոլսոյ համար ԲԱՆԱՍՈՆ ԴՐԵ. եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման 12 Ժրանք կամ 5 բուլլի: Թղթասարական ծախքը հաճախութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրապարակ կ'ելլէ ամէն շաբաթ առօր: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն հաճախութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առաք-
կութիւնները նկատողութեան չեն առնուիր:
Զի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտիկ պայ-
մաններով:

Զեմ-ԲԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درغلیه ده غلطه ده (ماسيس) غرضه سی اداره سی

ԽՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՍ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կառավարութեան ֆոնդրօյից ներքեւ, երաշխաւորեալ դրամագումար ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատած է՝ միշտ գոյ ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբ եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարիզի՝ Օբէրա, Վոսվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Յօլի-Տրամաթիք եւայլն թատրոնները, նաեւ Պօստոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլայի, Նանդի, Նիօի, Ալճերիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարէն, Լուվրի վաճառատուները, Բիկմալիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառափնիէնի, Օթէլ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսպորտային, Հալլը-Մարսիլիա նաւարկութեան, Ծովային Փոխադրութեանց, Ֆրանսական Թրանսպորտային, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Մասնաւորապէս ուշադրութեան տրուելիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկերութիւնը, իր Կաղմական Կանոնագրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ մը իր ելմտական կացութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական նախարարութեան քննութեանը. նոյնպէս Սէնի քաղաքապետութեան, Բարիզի Առեւտրական Սենեակին եւայլն:

Ընկերութեան դրամատունն է Քրէտի Լիոնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կաղմի գործակալութիւնը ստանձնած է մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել՝ թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար: Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances g n rales Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հաօցե. — Պօլիս, Մահմուտ փաշա, Պէոյիւք երլտըզ խան, թիւ 14, Լա Գօնֆրանս ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող անքիֆաի վաճառատուն մը, Պօլիս, Շուկայ, Մուհաֆազաճըլար, թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յանձնարարութիւններ կ'ընդունուին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԱՐԻՄ

ՍՄՄԱՆԵԱՆ ՇԱԲԱՐԱՎՈՐԾ ԲԵՐԱՅԻ

Սոյն հանրածանոթ չաքարավաճառը՝ Բերայի շիտակ ճամբան, թիւ 54, իր խանութը ընդարձակած ու ճոխացուցած է, թէ՛ իբրեւ բարխսրոյի եւ թէ՛ իբրեւ չաքարավաճառ, աւելի գոհ ձգելու համար իր բազմաթիւ յաճախորդները: Ամբան եղանակին մէջ, համեղ պողպատեղանքներու պէսպիսութիւն մը կայ գորեկ եւ գիշեր:

ՀԱՅԻ ՍԱՐԻՄ Օսմ. չաքարագործը ճոխ մթերք մը ունի հարսանեկան չաքարեղէններու, ընտիր տեսակէ, ու մասնաւորապէս յանձն կ'առնէ հարսանեկան հանդէսներու առթիւ ոչ միայն անոնց հայթայթումը՝ այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տուններու մէջ:

Միակ մասնաճիւղ, Ղալաթիա. Թօփճըլար Ճատտէսի, Թ. 101:

24-30



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը աւանանայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ջեռփի, ոտփի ու ոտփի եւ ձեռփի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարեալագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ ըովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը դնէ:

ՍԻՆԿԷՐԻ մեքենաները կը ծախուին մի միայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱԲԱՐԱՎՈՐԾ ԲԵՐԱՅԻ

- | | | |
|--------|---|---|
| ԲԵՐԱՅԻ | } | 1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթիա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | } | 1. Սինկէր Խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊԱՆԱՏ | } | 1. Սուլթան Համամ, Թ. |
| | | 2. Սուլթան Պէյադղիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍԵԻՏԱՐ | | Չարչը Պոյու, Թ. 120. |

Գաւերը եւ նորոգութիւնք ձեռք.

Կատարեալ երաւարարութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

ՀԻՒՆԵՂՈՒԹԻՈՒՆԷ ՎԵՐՋԸ՝ ԶՅՐՈՒԹԻՈՒՆ

Երբ տենդեր և երկայն հիւանդութիւններ և անհանգստութիւններ որոնք մարմնը տկարացուցած և ընդհանուր անզօրութեան մէջ ձգած են, ի հարկէ մարդս զօրացուցիչ բանի մը կարօտ է որ զինքը շուտով կատարեալ առողջութեան հասցնէ:



SCOTT'S EMULSION

աշխարհիս մէջ առաջին կարգի զօրացուցիչ դեղ մին է և իրեն հաւասարը չիկայ: Ասիկայ թէ անորժակ կուտայ և թէ մար- սողութիւններ կը շտապէ. Մարմինը կը զարգացնէ և նոր հարուստ արիւն կուտայ, կենսաղութիւններ կը վերականգնէ և հիւանդութեան դիմադրելու համար ընդհանուր գրութեան զօրութիւն կուտայ: Ըսգօթի Բաղադրութիւնը թէ կե- րակուր և թէ դեղ է, և տկարացած զրութեան մը կարօտ եղած միս և զօրութիւնը առատապէս կը մատակարարէ. և ասոր անհամար օգտակար գործողութիւնները ստուգելու զարմանալի են: Անտարակոյս մեծ վտանքի մէջէ դրութիւններ երբ միս և զաւակ կը կորսնցնէ և հետեւապէս շուտով այնչափ կը տկարանայ որ հիւանդութիւններու դիւրաւ զոհ կ'ըլլայ:

ԸՍԳՕԹԻ ԲԱԳԼԱԹՐՈՒԹԻՈՒՆ

բոլոր կերակուրներու զօրութիւնը կը պարունակէ, ոյժի վատութեամբ կը դադրեցնէ և առողջատես միս կը կազմէ: Ընդ միշտ վարդադոյն փաթեթի մը մէջ և վրան այս պատկերով կը գտնուի:

Բուրբ բեղաճարձները և բեղաճարձները իւր ծախսին:

Հիշերու վրայ ասոր ուշա- գրութիւնը ընել պէտք է:

“AU COUSSIN D'OR”

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՍԿԵԹԵԼ ՈՒ ՄԵՏԱԲՍԱ.
ՀԻՒՍ ԲԱՆՈՒԱԾՔՆԵՐՈՒ ճօխ հաւաքածոյ մը գտնել կարելի է՝ Բերա, Լիւքսեմպուրկի եւ Քլիւպի չէնքերուն միջեւ նոր բացուած իողոցը, Օ ԲՈՒՍԷՆ ՏՕՌ անունով նորա- հաստատ փօքրիկ սիրուն վաճառատան մէջ:
Կնոջական արդուզարդի և ընտանեկան նուէրներու յարմար, ինչպէս նաեւ սա լօններու զարդարման յատուկ ճաշակա- ւոր գործուածքներու պէսպիսութիւն մը, — ամէնքն ալ ձեռքով բանուած ու դիւրամատ- չելի գիններով, Ապսպրանքներ կ'ընդունուին նաեւ մեծաքանակ պատրաստութեանց համար:
Կ'արժէ ԵՐԹԱԼ եւ ՏԵՍՆԵԼ տեղական արհեստագործութեան եւ մասնաւորապէս հայ աղջիկներու ձեռարուեստի այս գեղեցիկ արտադրութիւնները որոնք մեծապէս կը զը- նահատուին Եւրոպացիներէն:

ԶՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Գնեցէք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱ ԳՈՒԼԵԱՆԻ՝ Զինաստանէն, Հնդկաստանէն, Ճափայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած քարմ, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն, որոնք ձմրան եղանակին յարմարագոյն ըմ- պելիներն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահճէ Գափու, ձէլալ պէյ խան, թիւ 10:

Մասնաճիւղեր թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Եգիպտոս:



ԴԱՇՆԱԿԱՀԱՐ երիտասարդ մը, որ Եւ- րօպայի մէջ ուսումնասիրութիւններ կատա- րած է, պատրաստակամութիւն ունի այցե- լութեամբ դասեր տալ դպրոցներու եւ տու- ներու մէջ: Պէտք ունեցողները կրնան դիմել Մասիսի խմբագրութեան:

ՄԱՍԻՆ

53^ր ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻ 49

6 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1903

ԵՐԿՈՒ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԸ

ՔԱԶՈՒՆԻ ՍԻ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Օրուան սը միայն տարբերութեամբ իրա-
րու ետեւէ գերեզման կ'իջնեն Հ. Մանուէլ
Վ. Քաջունի՝ Վենետիկեան Մխիթարեանը և
Հ. Մատաթիա Անտոն Գարագաշեան՝ Վիէն-
նացի Մխիթարեանը:

Երկուքն ալ արդէն լի վաստակօք - ինչ-
պէս պիտի ըսէին—կը փական իրենց կեանքը,
կատարած իրենց դերը և պարտականութիւնը,
և հասած այնպիսի տարիքի մը ուրկէ յետոյ
այլեւս աշխատիլ դժուար է:

Հ. Մանուէլ Քաջունի, բնիկ Կ. Պօլսեցի,
ծնած 1823 օգոստոս Գին, հետեւաբար հինգ
տարու աւելի փոքր է քան Մատաթիա Գա-
րագաշը որ 1818 փետր. 11ին ծնած է՝ դարձ-
եալ Կ. Պօլսոյ մէջ: Ինչպէս հասակաւ հինգ
տարու մեծ էր՝ նոյնպէս նաև ձեռնադրու-
թեամբ երէց էր Գարագաշ որ 1840 նոյեմբեր
1ին քահանայական կարգ կը ստանար մինչ
Քաջունի 1843 օգոստոս 15ին նոյն աստի
ճանը կ'առնէր Վենետիկի մէջ:

Մինչև հոս երկուքին կեանքը իրարմէ
զանազանող որեւէ երանգ կամ դրոշմ չկայ:
Տարբերութիւնը միայն հոն է որ մէկը ասպ-
րեւով միջավայրի մը մէջ ուր ամէն բան
ջինջ ու պայծառ է՝ երկնքին կապոյտէն մին-
չև ծովուն կապոյտը, չէ ունեցած այդ միտ-
քի յստակութիւնը աղօտացնող և մթազնող
տարակոյսի սև բիծերը և հետեւող ու նմա-
նող միտք մը կը դառնայ, մինչ միւսը՝ այդ
ընդվզողը՝ դիպուածին բերմամբը առնելով
դաստիարակութեամբ այնպիսի ներշնչումներ
որոնք մարդը տարակուսող և ճշմարտութեան
հետապնդող կ'ընեն, իր ներքին հոգեկան

լարոյական կեանքին մէջ խռովք մը զգա-
յած և մռայլ ու մութ դտնալով զաղա-
փարը որուն կոչուած էր ծառայել, թոթա-
փած է իր վրայէն այն սև վերարկուն որուն
տակ ծածկուած՝ չէր ուզեր սեւաբոյր կեղծի-
քով մը ապրիլ՝ արտաքինին հանդոյն:

Եւ Հ. Մատաթիա Գարագաշը՝ ասոր հա-
մար եղաւ օր մը Պ. Մատաթիա Գարագաշ-
եան, մինչ Հ. Մանուէլ Վ. Քաջունի՝ իբր
կրօնի համոզեալ պաշտօնեայ՝ շարունակեց իր
ծառայութիւնները որոնք իր պարտականու-
թեանց սահմանին մէջ էին, և մեռաւ նոյնիսկ
զանոնք կատարած պահուն: Գարագաշ հո-
գիներու վարդապետը ըլլալու տեղ՝ միտքե-
րու վարդապետը կըլաւ և նորէն նոր վերա-
ջինեց համբաւ մը որ անմահութեան փոխ-
ուեցաւ յետոյ կամայ կամայ:

Հ. Մանուէլ Վ. Քաջունի իրական վա-
նական մարդն է, որ կը ճգնի, կ'աշխատի,
կը տառապի պարզապէս օգտակար ըլլալու
տենջով, միշտ բարեպաշտ և երկիւղած զգու-
շաւորութեամբ մը մերձենալով զխառնեանց
սահմաններուն որոնք շատ անգամ շատ ուղիղ
չեն համեմատի կրօնքի մարդոց դաւանանքին
և ըմբռնումներուն հետ: Բայց Քաջունի փո-
խանակ քննելու, վերլուծելու, տարբազադ-
րելու, կը դասաւորէ, կը պատշաճեցնէ և կը
հաշտեցնէ իր գաղափարներուն և կարծիք-
ներուն հետ բոլոր այն տարակուսելի կէտերը
որոնց յաճախ հանդիպած է թերեւս՝ Նոյնիսկ
իր անձն ալ կը պատշաճեցնէ իր աշխատա-
սիրութեանց, և կուտայ ինքզինքը գործ-
նական կիրառութեանց այն գիտութեանց

որոնց դասագիրքերը պատրաստած էր ան-
խոնջ կերպով մը իր միաբանական բովան-
դակ կեանքին մէջ :

Իր կեանքին մէջ հակասութիւն, ոստում
և ընդլզում չկայ բնաւ երբեք : Իր քաւերեմ
զանազան գիտական երկերը՝ յաճախ սխալ
գաղափարով մը գրաբար չարադրուած , ինք-
նին կը կազմեն դարձեալ ներդաշնակութիւն
մը՝ մէկզմէկ լրացնելով և ամէնքը մէկէն
կազմելով և ամբողջացնելով իր Գիտութեանց
Էւ Արուեստից հսկայ Բառգիրքը որ իր անունը
անմոռանալի պիտի պահէ :

Բայց իր գլխաւոր ծառայութիւնը եղած
է Բատուայի մէջ Մ. — Ռաֆայէլեան վարժա-
րանի կալուածներուն մատակարարութիւնը
զոր անընդհատ 25 տարի վարեց մեծ ձեռն-
հասութեամբ և որմէ դեռ այս տարի հրա-
ժարեցաւ : Այս առթիւ ի պատիւ իրեն կա-
տարուեցաւ մայիս 14ին հանդէս մը , որուն
մասնակցեցան ո՛չ միայն ուսանողութիւնը՝
այլ նաև բազմաթիւ տեղացիներ , որոնք եկած
էին իրենց երախտագիտութիւնը յայտնելու
այն բարերարին որ մեծ ծառայութիւն մա-
տուցած էր , հաց և գործ հայթայթելով ի-
րենց այսքան տարիներ : Վենետիկի ժողո-
վուրդը արդէն առաջուց ճանչնալով երախ-
տիքը անտեսագէտ Միխիթարեանին , հաճած
էր որ տարիներ առաջ փոխունի Քաթսոն
գեղին և անոր փողոցներուն անունները , ո-
րոնցմէ մէկը կը կրէ այսօր Քաջունի անունը :
Նոյն օրը , Հ. Քաջունի կը ստանար նաև
Միխիթարեաններէն «Թագակիր Աքբայ» փա-
ղոսը , որով իրաւունք կը ստանար եպիսկո-
պոսական ղզեստով պատարագելու , պատիւ
մը զոր Միխիթարեանք երկու հարիւր տար-
ուան մէջ ասկէ առաջ միայն մէկ անգամ
տուած էին իրենց մէկ անդամակցին : Այդ հան-
դէսէն յետոյ Հ. Քաջունի Բատուայէն բաժ-
նուեցաւ , միջավայրէ մը ուր իբր ճշմարիտ
ազարակապան և լուրջ անտեսագէտ՝ գիտցած
էր արդիւնաւորապէս շահագործել թէ՛ հո-
ղերը և թէ՛ արամադրելի դրամագլուխը :

Այս քառորդ դարու մը յոգնեցուցիչ աշ-
խատութիւնը՝ տակաւին մարած չէր իր մէջ
եռանդը գործելու և աշխատելու , վասն զի

անկէ հաղիւ բաժնուած՝ դարձեալ միաբա-
նական գործերու համար հոս մայրաքաղաքս
եկաւ ծերունի Միխիթարեանը և հոս է որ
մեռաւ նոյեմբ. 18/1 դեկտ ին :

Իր գլուխ—գործոցին ճակատը ունէր նը-
շանաբան մը . «Երատե ջանք» . ահա ուղե-
ցոյցը որով իրաւամբ հանդիսացած էր յարա-
տե ջանադրութեան մարմնացումը :

Գարագաշեան վանական ըլլալու կոչում
ունեցող մարդ չէր : Անձնութիւնը՝ որ
կղերականին առաջին նշանաբանը պէտք է
ըլլայ , շատ ընտանի յատկանիշ մը չէր իրեն
համար , վասն զի ուզած էր ինքն իրեն հա-
մար ապրիլ քան թէ ուրիշներու : Իրաւ է թէ
մեծ աշխատութիւններ ունեցաւ , արդիւնք-
ներ երեւան հանեց , աշակերտներ հասուց ,
գաղափարներ պաշտպանեց , բայց բոլոր ա-
սոնց տակ ընդշնամարեւ ուզեց և յաջողեցաւ
գտնել ակնկալութիւն մը՝ որ իր արժանեաց
գնահատութիւնը եղաւ : Բաւական կը որիկ
հարստութեամբ մը վարձատրուեցաւ այն հա-
սարակութիւնէն որուն համար ժլատ է , վար-
ձատրել չգիտեր , գրական վաստակաւորները
անօթի կը ձգէ , ըսուած է :

Գարագաշեանի կեանքը հերքում լինէր
այդ կարծիքը ունեցողներուն դէմ , և միան-
գամայն ապացոյց մը թէ գրագէտը չէ որ
չվարձատրուիր , այլ ժողովուրդն է որ չի
գնահատեր՝ վասն զի իրեն յարմար գործ մը
չներկայացուիր : Գարագաշեան կրցաւ շահա-
գործել ժողովուրդը՝ անոր պէտքերը լրացը-
նելով : Իր վիճնա տպած գործերէն ոչ մէկը
այդ պէտքերը կը լրացնէին , հետեւաբար
չժողովրդականացան : Երբ Կ. Պոլիս եկաւ ,
մոսաւորական դարգացման բաղձացող հա-
մայնքին պէտքերը մօտէն տեսաւ և Քերա-
կանութիւններով ու զանազան դասագիրքե-
րով ողողեց հրապարակը : Գրաբար ան ա-
տեն ուսման լրումն էր , ուստի իր հմտու-
թեամբ ալ համբաւ չահեցաւ : Բայց երբ կեն-
դանի լեզուն իր կաղմակերպութեամբ՝ տիե-
զերական օրինաց համաձայն , եկաւ իրեն
սահմանեալ տեղը գրաւել , Գարագաշեան
այլևս անցեալէն համարեց զայն , թէև
տակաւին կենդանի եղած ըլլար :

Չափազանց սկրը երբեմն ծայրայեղութեան կը տանի մարդը: Գարազաշեանի գլխաւորը նկատմամբ ունեցած սէրը չափաւանջութիւն մըն էր, որուն հիմը կը կազմէին իր խոր հմտութիւնը և ծայրաստիճան հիացումը, որոնք պատճառ եղած էին զինքը տրամաբանական, բնական և սովորական կարգէն չեղեցնելու և ծնունդ տալու իր սաանկարելի պահանջումին որ էր վերակենդանացնել գրաբարը: Իր այս չափազանցութիւնը երբ մէկ կողմ առնուէր, պիտի գտնենք լեզուագէտ մը, հմուտ այնքան՝ որքան կարելի է ըլլալ: Իր սկզբունքները և դատողութիւնները հին լեզուին նկատմամբ խիստ առողջ են և կը պատշաճին ճիշդ վիճնական Դպրոցին սկզբունքներուն որոնց նոյնիսկ հիմնադիրներէն ըլլալու պատիւը ունի: Բայց իր հմտութիւնը այս տեսակէտով ալ պէտք է սահմանափակել, աւելի ևս որոշ կերպով պատկերացնելու համար մարդը իր բոլոր գործունէութեամբը: Իր մէջ մի՛ փնտռէք բնաւ լեզուաբանը և համեմատական լեզուաբանութեան տարրական կանոններու դիտական սկզբունքներով կիրարկող մարդը:

Իր մասնագիտութիւնը լեզուին բառա կազմութիւնը և բերականական դարձուածներն են, որոնք իրեն համար դադարիչ չունին: Արդէն միւսները համեմատաբար նոր դիտութիւններ ըլլալով՝ իրեն անծանօթ մընացած էին և միայն վեր ի վերոյ ծանօթութիւն մը ունէր անոնց վրայ:

Եթէ լիակատար ծանօթութիւն մը ունենար այդ դիտութեանց վրայ, չպիտի կարենար Տէրվիշեանի քննական-քաղղատական-դիտական գործերը զուգակշռել Հիւնքեարպէյէնտեանի ոչ-դիտական գործին հետ:

Գարազաշեանի մէջ լեզուաբանը պէտք չէ փնտռել, այլ լեզուագէտը: Մասնաւորապէս իր և Գաթրճեանի գործը եղած է՝ չէթէ մեր լեզուին ծագումովը դրաղիլ՝ այլ մեր լեզուին յատկանիշներովը և հանգամանքներովը որոնց մասին ունեցած ծանօթութեամբը անհաւասար էր Գարազաշեանի:

Գրութեան մը ձեւէն՝ անոր գրուելուն ժամանակը որոշելու գործը՝ Գաթրճեան—Գա-

րազաշեանի դպրոցին գործը եղաւ: Ասոնք իրենց մանրադնին խուզարկութիւնը այնքան առաջ տարին որ միեւնոյն դարուն երկու կէսերուն զանազանութիւններն ալ որոշեցին և ասկէ առաջ եկաւ այն լոին պայքարը՝ որ երբեմն շունթալից հանգամանք ալ կ'առնէ—որ կը մղուի 1835—1842էն սկսեալ երկու Մխիթարեան միաբանութեանց մէջ: Վիճնացիք Ե. դարու առաջին կիսուն չըքնաղ լեզուն միակ և հարազատ նմոյշը կը համարին հայ լեզուի, մինչ վիճնաթիւ Միաբանները չեն խորշի յանձնարարելէ Մեսրոպէն մինչեւ Երզնկացի բոլոր մատենագիրները, բաւ է որ անունով գրաբար գրած ըլլան եւ զանոնք իբր վկայութիւն եւ նմոյշ համարելով՝ անոնց լեզուին նմանութիւններ կ'ընեն: Գարազաշեան ինչպէս բոլոր վիճնացիք՝ գլխովին կ'արհամարհեն այս ըմբռնումը եւ ահագին տարբերութիւն մը կը նշմարեն Ե. դարու առաջին եւ եկրորդ կէսերուն մէջ իսկ:

Այսպէս Գարազաշեան կ'ըսէ — «Յետ իբր երեսուն կամ թէ աւելի քան քառասուն ամաց մահուան Սահակայ եւ Մեսրոպայ, թերեւս եւ առ կենդանութեամբ իսկ ոմանց յաշակերտաց, գործակցաց նոցա, բանայր յանկարծ առաջի լեզուին զառիւյճար իմն որ զնաց եւ գլորեցաւ լեզուն փոփոխութենէ ի փոփոխութիւն, եւ եթէ երբեմն թուեցաւ իմն սթափել եւ դառնալ յետս, որպէս եղեն իսկ առ վկայասիրին, եղեւ նմանութեամբ միայն ազնուագոյն ժամանակի լեզուանից:

«Աւելորդ է կալ եւ ցուցանել մանր գամբաւ խնդիրն որ կայ ի մէջ լեզուին այոյ երկուց ժամանակաց, իւրաքանչիւրն զատուցեալ իւրով առանձինն իւրք. իրք են այս եւ ոչ կարծիք... Ձիւն արդեօք էին պատճառք այնպէս արագն եւ յանկարծ անկանելոյ հայ լեզուին, մասնաւոր մատենագրութեան, զի չթուի թէ անկումն նորա եղեւ այնպէս արագ եւ յանկարծ որպէս սորայն, եւ ոչ ի նմին պատճառէ: Առ համառօտութեան, առ այժմ այսչափ ինչ միայն ասել շատ և քաւական լիցի, թէ գլխաւոր պատճառ անկման հայ լեզուին և մատենագրութեան եղեւ այն որ

և հռոմէականին եղև պատճառանք (Բը-
նան. Մարի. Աւերդ. էջ 46)» : (*)

Այդ երեսուն կամ քառասուն տարուան
չրջանը կը գաւառին Գարադաշ և իր համա-
խոհները ոսկեղէն ժաման : Կ հայերէն զրա-
րութեան և սահմանելու համար զայն՝ ճաշակ
ոսկեղէն զարութեան հանգէսին խնամակալ-
ները կ'ըսեն թէ «այս այն լեզուն է որով
գրեաց մեծն Եղնիկ, պերճն Ագաթանգեղոս,
ընտանին Բիւզանդ, սքանչելին Կորիւն : այս
այն լեզուն է զոր ընթիւնումք հիացեալ
զարմացեալ յապուշ հարեալ ի թարգմա-
նութիւնս նուիրական գրեւոյն և դործոյ
հոշարաւորագունիցն ի հարց եկեղեցւոյ, եւ-
սեբեայ, Բարսղի, Կիւրղի, Ոսկերերանի,
Սեբերիանու, Եփրեմայ, Յակոբ Մծընացւոյ :
Այս այն լեզուն է որոյ զհնագոյն օրինակս
տեսանեմք ի հատակոտորս ինչ երգոց վրպա-
սանաց... : Այս այն լեզուն է զոր տեսանեմք
թեքեալ առ ամենայն նիւթ ըստ արժանի
եւ ըստ պատշաճի, ծանր՝ յազօթս, պարզ՝ ի
վարդապետութիւնս, սաստիկ՝ ի յանդիմա-
նութեան. մեղմ՝ ի խրատս, ծաղկալից ծաղ-
կաւէտ՝ ի նկարագիրս, հոյակապ՝ ի վրպա-
սանութեան, միշտ ևւ յամենայնի յատակ,
զգօն ևւ վայելուշ, ի զարդարանան համեատ,
այլ չքնաղ առանց սլիւրելոյ ևւ հպտելոյ» : (**)

Ասկէ կը հետեւցնեն թէ ամենակարող է,
այսինքն ամէն գաղափար ևւ ամէն միտք
կրնայ արտայայտել : Գարադաշեան եթէ միայն
այս դադափարը պաշտպանէր, սխալ բան մը
ըսած ևւ ըրած չպիտի ըլլար : Իր սխալը զայն
վերակենդանացնելու ևւ գործածելի ընելու
գաղափարն է, որմէ այսօր ետ կեցած են իր
գաղափարակիցները՝ ինչպէս նաեւ Վիկտորյայի
մեծայարգ միաբանութիւնը :

Դաւով իր քննասիրական երկերուն՝ պէտք
է ըսել թէ մատենագրական խորին հմուտ-
թեամբ մը լեցուն են անոնք, բայց դժբաղ-
դարար չատ ուղիղ ևւ ճշգրիտ չեն իր եղ-
րակացութիւնները սրոնք նոյնիսկ իրենց հը-
րատարակութեան պահուն քննադատելի շատ
մը կէտեր կը պարունակէին՝ մինչդեռ այսօր
բոլորովին վերակազմելի են : Իր դուրս-գոր-

ծոցը՝ միակ դործն է որ իրմէ կը մնայ, հա-
կառակ երեսուն երկու տարբեր գիրքերու ևւ
բազմաթիւ տպագրութիւններու արժանացած
գիրքերու հեղինակ ըլլալուն, ևւ ան ալ
դժբաղդարար այնքան թերի է ու պակասա-
ւոր որ չատ հեռու չէ այն օրը ուր զարդի մը
վերածուի առանց օգուտ ունենալու : Իր հը-
նագիտական հմտութիւնը անուրանալի է,
իր դատումներն ալ բաւական ճշգրիտ, բայց
բոլորովին տկար է իր ստուգարանական մա-
սը՝ որ անբաժան ևւ լրացուցիչ մասն է իր
քառահատոր երկին նպատակին հասնելու ծա-
ռայող միջոցներուն :

Գարադաշեան իբր հրապարակագիր ալ
դեր մը կատարած է, բայց այդ դերը այն-
քան աննշան կը մնայ զրաբարագէտին քով
որ մարդ չպիտի ուզէ անոր վրայ անդրա-
դառնալ, ինչպէս նաեւ իբր իմաստասէր ևւ
գաղափարի մարդ որեւէ նախաձեռնութիւն
կամ դործ չէ ունեցած, առանց սակայն ինքը
զերծ մնացած ըլլալու որեւէ իմաստասիրա-
կան դպրոցի ազդեցութիւնէ :

Պիւիւնէրական մըն էր, բայց րո մը հրա-
պարակաւ ո'չ այդ դպրոցը պաշտպանեց ևւ
ո'չ ալ զայն բացատրեց հանրութեան : Ինքը
իրեն համար չինած էր այդ համոզումը : Նոյն
իսկ իր Փիլիսոփայութեան գիրքին մէջ որ-
եւէ ակնարկութիւն չկայ անոր նկատմամբ,
այլ ընդհակառակը կէս—բարեպաշտիկ շունչ
մը՝ որ նախկին եկեղեցական մարդը կը յի-
շեցնէ : Հետեւաբար անձնական ևւ ժողովուր-
դը ուղղակի շահագրգռող երկ մը չթողուր
Գարադաշեան : Կյս մասին՝ ինչպէս իրենց
նախնական կեանքին մէջ նոյնպէս ևւ մահ-
ուանը օրը դարձեալ կը համաձայնին Քա-
ջունի ևւ Գարադաշեան որոնց երկուքին ալ
աշխատասիրութիւններէն միայն կը մնայ մէկ
մէկ նշանակելի դործ, անոնք ալ մէկը ան-
մատչելի, միւսը թէ՛ շատերու անըմբռնելի
ևւ թէ՛ միանգամայն հինալու տրամադիր :
Իսկ այն միւս դործերը զոր երկուքն ալ ու-
նեցած են, գիտութեան ժողովրդականաց-
ման ևւ կենդանի լեզուներու աշխուսատիւի
տիրապետութեան բերմամբ՝ անգործածելի
գիրքերու դասակարգը անցած են, որոնցմէ
այլեւս անոնք միայն պիտի օգտուին որոնք
հին լեզուին վրայ քիչ շատ ծանօթութիւն
ունին : Եւ դժբաղդութիւնը հոն է որ ասոնց
թիւը օրէ օր կը նուազի : Ս. ԱՆԴԵՂԱՅԵՍԵ

(*) Տե՛ս. Ճաշակ Ոսկեղէն Դպրութեան
էջ 203—204. Ա. տարի.

(**) Տե՛ս Ճաշակ էջ 3, Ազդ :

ՇԱՐԱԹԷ

Կրօնային ու բարեպաշտական հանդէսները իրարու կը յաջորդեն: Առջի կիրակին, Խաս-գիւղի մէջ կը տօնուէր Գալֆայեան Որբա-նոցին հաստատման 37ամեակը և այս կի-րակի Մայր—Եկեղեցւոյ մէջ պատարագ կը մատուցուէր՝ Դպրաց Դասին շապիկները նո-րոգող երկու հեռաքնակ աղօթայիններու նըն-ջեցեալներուն հոգւոյն: Պատրիարք Սրբա-զանը, որ նախադահեց այս կրկին հանդէս-ներուն, թէ՛ իր քարոզներուն մէջ և թէ՛ յետոյ սեղանի վրայ արտասանած բանախօս-ութիւններովը տպաւորիչ լեզուով մը վեր հանեց այդ բարեգործութիւններուն նշանա-կութիւնը: Խոսքիւղի մէջ կատարուած ա-րարողութիւնը աւելի յոյզիչ հանգամանք մը ունէր, վասնզի Որբանոցի մը անշուք յարկին տակ կը փառաւորուէր ճշմարտապէս անձ-նուէր ու տոկուն կամքի տէր կնոջ մը, Սըր-բուհի մարապետին յիշատակը որ արժանի է ամէն յարգանքի:

Երկրորդ հանդէսը, այս կիրակի օրուանը, զուտ բարեպաշտական շամ եկեղեցասիրական էր. անոր շարժառիթ եղող երկու նուիրա-տուններէն մէկին՝ Յովհաննէս Էֆ. Թալչան-ճեանի անունը, վերջին տարիներս, յաճա-խակի լսելու և արձանագրելու առիթը ու-նեցաւ Պոլսահայ լրագրութիւնը, միշտ բա-րեգործական շրջանակի մէջ. Նպաստից Յանձ-նաժողովը, Գալֆայեան Որբանոցին մատարան շինութիւնը, Ազգ. Հիւանդանոցը և գթու-թեան կտրօտ ուրիշ հաստատութիւններ ա-մէն առթիւ նպաստաւորուած են այդ ազ-նուասիրտ վաճառականին առատաձեռնու-թեանէն որուն նորագոյն ապացոյցն է՝ Քարողի Մըցումը որ կը զբաղեցնէ այս միջոցիս մեր Պոլսեան ու հեռաքնակ կղերը: Հասած գրաւոր քարոզներուն թիւը հարիւրի կը մօ-տենայ արդէն. իւրաքանչիւր ձեռագիրը մի-ջին հաշուով 10 էջ ենթադրելով, հազար էջի ընթերցում մըն է զոր պիտի կատարին ուրեմն Յովսէփ—Իզմիրեանց Յանձնաժողով-ին եկեղեցական անդամները և մասնաւո-

րապէս Օրմանեան Ս. Պատրիարքը որ սեր-տիւ փարած է այս կրօնային—գրական խն-նատիւ մըցումին, և ո՛չ թէ իր պարտակա-նութիւն՝ այլ հաճոյքով ու հետաքրքրու-թեամբ է որ կը կատարէ այս ընթերցումը, իր գիշերային տրամադրելի ժամերուն մէջ, մէկիկ մէկիկ նօթագրելով իւրաքանչիւր քա-րոզին եզրը, դասաւորելով զանոնք ու նա-խապատրաստելով մըցանակի որոշման գործը:

Սպասելով այդ մըցման արդիւնքին, որմէ-կտքը քարոզագիրքն ալ պիտի հրատարակ-ուի՝ Մեկենասին անուանը ձօնուած, օրուան հրատարակութիւնը կրնանք նկատել Հիւան-դանոցի Ընդարձակ Օրացոյցը որ իր նորար-ուեստ ու նրբաճաշակ կողքին վրայ դրոշ-մուած 1901 թուականով կուգայ յիշեցնել մեզի թէ տարին վերջանալու մօտ է արդէն: Այս տարուան Օրացոյցն ալ, իր նախորդնե-րուն պէս, ստուար հատոր մը կը կազմէ՝ 570 էջով. ունի բազմազան տեղեկութիւն-ներ, և աւելի՛ ոյժ տրուած և խնամ տար-ուած է հոն գործի ասպարէզներու յատուկ տեղեկութեանց՝ քան գրական նիւթերու: Յառաջաքանի տեղ ծառայող Զեկոյցը կը շեշտէ արդէն այդ պարագան, թէ «Լիճա-կագրական և աշխարհագրական գիտելիքներ խնամով ճշդուած են, հրապարակի և գոր-ծառնական տեղեկութիւնները զգալի կեր-պով ճշտացած են, և շատերուն փափագա-նաց համաձայն՝ քանի մը գրական նիւթեր ալ աւելցուած են՝ հաճելին օգտակարին խառնելու ծանօթ սկզբունքին հետեւելով»: Այդ Գրական Էջերը կը կազմեն՝ Ռ. Յ. Պէր-պէրեան Էֆ. ի խորիմաստ մէկ գրուածքը, Անհրաժեշտ գիրք վերնագրին տակ, Օրացոյ-ցին պատմութիւնը որ շահեկան նօթագրու-թիւն մըն է անոր սկզբնաւորութեան (1757) մինչև մեր օրերը հրատարակուած հայերէն զանազան Օրացոյցներուն ու կրած ձեւափո-խումներուն, տեղերով, թուականներով ու աշխատասիրողներու անունով: Յետոյ կայ Նշան ուր վոխնսնեայնեու գլուխը, որ 1901 յու՛ ուարի սկիզբէն մինչև 1903 սեպ-տեմբերի վերջ անհետացած ծանօթ հայ դէմ-քերու յիշատակութիւնը կը պարունակէ, կեն-

սաղարկան հակիրճ ծանօթութիւններով : Բաւական երկար է այդ մահացողացի՝ որուն սկիզբը կը դառնա տաղանդաւոր հրապարակագրի մը՝ Մատթէոս Մամուրեանի անունը ու էն վերջը տաղանդաւոր բժիշկի մը՝ Տօքթ. Խօրասանճեանի անունը : Գերեզմանատան մը տպաւորութիւնը կը թողուն այդ տասներեք էջերը ուր քով քովի կը հանդէպին ականաւոր պաշտօնատարներ, բարեգործ հարուստներ, արուեստագէտներ, գրողներ, եկեղեցականներ, կիներ, —ամէնքն ալ յարգելի յիշատակ մը ու անուն մը թողած հոնրութեան համար :

Օրացոյցին միւս գլուխները, ստուարագոյն մասը, նուիրուած են վիճակագրական, սեղանաւորական, աւելտրական, գիտական և ուրիշ ընդարձակ տեղեկութեանց, անցեալ տարուանին նման որոշ և հաստատուն ձևով : Աւելորդ իսկ է փափագ յայտնել, 1904ի Ընդարձակ Օրացոյցին վրայ այս արագ ակնարկը նետուած պահուն, որ հնար եղածին չափ շատ սպառուծ ունենայ անիկայ՝ ի նըպաստ Հիւանդանոցին. այդ սպառումը ապահովուած կրնանք նկատել, թէ՛ գործին բարեգործական հրատարակութիւն մը ըլլալուն և թէ՛ մանաւանդ այն հմտալից ու հանրագումար հանգամանքին շնորհիւ զոր Օրացոյցին խմբագրութեան վերին հսկողութիւնը ստանձնող եկեղեցական բարձր հեղինակութիւնը կը դրոշմէ անոր վրայ, երկու տարիէ ի վեր :

Բայց, Օրացոյցի հրատարակութենէն, եկեղեցական —բարեգործական հանդէսներէն ու նոյն իսկ Մատաթիա Գարագաշեանի գերեզմանին շուրջը յարուցուած դաւանական վիճարանութիւններէն աւելի, վերջացող շարթումն ուշագրաւ իրողութիւնը կը ներկայացնեն՝ Երուսաղէմի գործերու մասին տրուած ու հրատարակուած Վարչական որոշումները, զորս կ'արժէ որ արձանագրենք հոս ալ : Բարթող էֆ. Թէլեանի վերադարձէն ի վեր, Երուսաղէմի խնդիրը նոր phaseի մը մէջ մտաւ, ինչպէս յայտնի է, և դիւանապետ —պատուիրակին տեղեկադիրը Խառն Ժողովին կողմէ կարգուած մասնախումբի


մը նախաքննութեան յանձնուեցաւ որ երեք նիստի մէջ աւարտեց իր ուսումնասիրական աշխատութիւնները : Այդ մասնախումբին եղբարակացութեանց համաձայնելով է որ Վարչութիւնը, իր չորեքշաբթի օրուան նիստին մէջ հարկ դատեց. 1.—Ստուգել պարտքին անկուն պատճառը : 2.—Երուսաղէմի մատակարարութեան՝ իր բոլոր ճիւղերով՝ ելմտացոյցի վերածուիլը : 3.—Ճշգրէ կալուածական շինութիւններէ ապագային համար սպասուած ակնկալութիւնները : 4.—Վանական Վարչութեան՝ կեդրոնէն հաստատեալ կանոնագրին համաձայնիլը : 5.—Վանական Վարչութեան վերակազմութիւնը կանոնաւոր կերպով : 6.—Երկպառակութեան սերմերուն բարձուիլը :

Այս որոշումները, որոնք Վարչութեան և անոր Ս. Նախագահին հոգածութեան հետ ցոյց կուտան նաև անոնց շրջահայեցութիւնը, չեղող և ուղիղ հանգամանք մը ունին և Ս. Յակոբեանց Միաբանութեան այս կամ այն անդամներուն, —չըսելու համար մէկ կամ միւս կուսակցութեան, —իրաւունք տալու յատկաշիւը չեն կրեր : Երուսաղէմի Վանքին ծանօթ խնդիրը խորունկ քննութեան և լուրջ ուսումնասիրութեան մը պէտք ունի տակաւին, — ահա՛ ինչ որ յստակօրէն երեւան կուգայ Խառն Ժողովին նշանակած եօթը կէտերէն : Եւ այս այնքան ճշմարիտ է որ, Խառն Ժողովը իր յառաջիկայ նիստին մէջ երկու ձեռնհաս ներկայացուցիչներ պիտի նշանակէ՝ Երուսաղէմ երթալով Տ. Յարութիւն Ս. Պատրիարք Հօր անկեղեւու և Միաբանութեան աշխատութիւնները դիւրացնելու համար : Այս կարեւոր պաշտօնին համար կը յիշուին, հիմակուց, Տիգրան Էֆ. Եւսուֆեանի, Միհրան Էֆ. Սեթեանի, Գրիգոր Էֆ. Խըսրեանի, Սահակ Էֆ. Ղազարոսեանի և Սեպուհ Էֆ. Տէմիրճիպաշեանի անունները :

Տ. Ա.

Յաջորդ թիւով Բանաստեղծութիւն մը Ա.Դ.ԲՄ. ՓԱՆՈՍԵԱՆԷ :

Ս Ե Ր Պ Ե Ր Թ Ս Բ Ե Ն Ս Ո Ր



Ձեմ ուզեր որ ուրիշ կից մը գտնուի,
Քեզմէ ամբիժ, քեզմէ մախուր ու սիրուն,
Հոգիես միշտ քեզ կը գովեմ ամենուն,
Ինչպէս պզտիկ աղուոր սրուակ մը բոյրի:

Ներկայութեանդ պատրանքն ըզգայ ուզելով,
Քեզմէ հեռու՝ տեսնութիւնով մը անել,
Կ'ուզեմ դիմֆիդ լոյս գիծերը նըկարել,
Բանաստեղծի խօլ, հասնումի հիգերով:

Եւ վայրկեան մը կը կարծեմ քե ես նորէն
Յաջողած եմ պատրանքի այդ խաղիս մէջ,
Ներանձնութեան հուրփոս քափովը անեղջ,
Սիրեսն փրթած՝ մարմինիս ծոյլ լըփումէն:

Ես որ ժամ մը առանց քեզի չեմ կրնար
Ապրիլ յուսով, ու հաւատալ ամբողջին,
Գծած պատկերս պիտի ժպտի՝ խնդաղին,
Զիս օրրելով, զիս զգուելով խօլաբար:


Ու աչքերդ հոն պիտի խօսին ինձի հետ,
Եւ ես անոնց սիրոյ երգերս պիտի լամ,
Դիցունիի բովոդ մարմինդ նըբիրան
Ինձմէ պիտի չբաժնուի առ յաւեփ:

Պիտի դիտեմ այդ նկարը ոսկերիկ,
Քանի որ միշտ քեզ չեմ տեսներ ամէն պահ,
Ու ձանձրախօսին տուայտանքն աներկբայ
Միայն քեզի պիտի նայիմ, սիրելիս:

Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ

Հ Ե Ր Պ Ե Ր Թ Ս Բ Ե Ն Ս Ո Ր

(ԻՐ ՄԱՀՈՒՄՆ ԱՌԹԻԻ)



Հէրպերթ Արէնսըրի մահով, մարդկու-
թիւնը կը կորսնցնէ գեղեցիկ հզօր իմացա-
կանութիւն մը, մտաւորական աշխատութեան
անլուր հերոս մը. Արիստոտէլէն ի վեր ո՛չ
մէկուն հաւասար համայնագէտ մ'առ մը,
անխոնջ վաստակաւոր մը փիլիսոփայական
ուսուցիչներու. Բայց մանաւանդ խորազ-

գած բարոյագէտ մը ա'յնքան հաղուագիւտ
արդի որոշողրապաշտ (deterministe) փիլի-
սոփայութեան, բնաշրջական վարդապետու-
թեան և, աւելի ընդհանուր կերպով խօսե-
լու համար, ժամանակակից Գիտութեան սահ-
մանին մէջ:

Ծնած է 1820ին Անգլիոյ Տէրպի փոքր
քաղաքին մէջ ուր հայրը, համեստ ուսուցիչ,
1814էն, Էռազմ Տարվինի՝ համանուն հռչա-
կաւոր բնապատուիւն մեծ-հօր կողմէ կազ-
մակերպուած Գիտութեան բարեկամներու
ընկերութեան մը մէջ քարտուղարի պաշտօ-
նին կոչուած էր: Հօրը գիտական ղեաղումն

էր մանաւանդ միջատաբանութիւնը որմէ դրդուած մանուկ Հերպէրթ միջատներու փոքրիկ հաւաքածոներ կը կաղմէր դատարանէ մէջ անխոնջ պաշտօններով. — «Ով որ իր երկտաւարութեան մէջ միջատներ և տունկեր չէ՛ հաւաքած, չի՛ ճանչնար այն լուսափող փող բանաստեղծութիւնը որ կ'ապրի մարդագետիններուն, ճամբաներուն ցանկերուն մէջ...» . ա՛յսպէս կը գրէր ան յետոյ : Յայտնի է թէ իր հօր գիտական ճաշակներուն աղդեցութեան տակ էր, աղդեցութիւն որ քիչ վերջը Գիտութեան առատաբուխ անսպառելի ստինքները ճաշակել պիտի տար իրեն, մտաւորական և հայեցողական ախեղերածաւալ սահմանի մը մէջ, ամէնէն բազմադիմի, ամէնէն խանդավառ աշխատութեան մը երջանկութեան մէջ : Միւս կողմէ, կան կենսագիրներ որոնք իր գիտական—փիլիսոփայական գործերուն մէջ ախրող բարոյական կանխազգութիւնները, իր ընկերաբանական գեղեցիկ այլասիրական ձգտումները կը հաստատեն իբր գրգռած ըլլալ Թոմաս Սթենսփրէ՛ իր հօրեղբորմէն, մարդասէր աղքատասէր հովիւ—քարոզիչ որ քսան տարուան պաշտօնավարած տեղւոյն մէջ հաստատած էր դպրոց մը, ժողովրդական մատենադարան մը և հագուստեղէնի ընկերութիւն մը : Հերպէրթ, իր կեանքին սկզբնաւորութեան մէջ, քաղաքային երկրաչափի պաշտօնին կոչուած երկաթուղիի ընկերութեան մը մէջ, ստիպուեցաւ հրաժարիլ այդ պաշտօնէն, քաջ տեսնելով իր հետադօտող իմացականութեան խանդավառ կենսականութիւնը : Կանուխէն արդէն համայնագիտական ճիղի մը բովանդակ աւելնը կը սկսի իր մէջ . ոչ մէկ նիւթ կը պակսի իր գրչին տակ : Օրինակի համար, Քաղաքական և Գիտական Փորձերուն մէջ, ուր ընթերցողը «Արեւին կաղմաւորութեան», «Միգամածին վարկածին» վրայ գրուած յօդուածէ մը կ'անցնի բոլորովին տարբեր բայց հաւասարապէս ուսումնասիրուած խնդիրներու՝ «Ոմին փիլիսոփայութեան», «Երաժշտութեան ծագումներուն» կամ, եթէ կ'ուզէք որ յիշեմ, «Երկաթուղիի վարչութեան բարքերուն և եղանակներուն» : Ի՞նչ բանի տեղեակ չէ, ի՞նչ բան չէ կարգացած արդէն : Իր

գործերէն իւրաքանչիւրին պարունակութիւնը արդարացնելու համար, հեղինակներու ցանկ մը մէջ կը բերէ զոր «անգլեկութիւններ» կը կոչէ . օրինակի համար Համադրական Փիլիսոփայութեան որ և է մէկ հատորին վերջը, Խորապէս կը ճանչնայ Ովկիանիոյ բնիկները, Եւրոպացիները և Բարունները, Յոյներէն և Հռովմայեցիներէն ո՛չ նուազ . գիտէ ինչ որ կ'անցնի կը դառնայ Ֆիճիի բնիկներուն մէջ, ինչպէս որ գիտէ թէ ինչպէս կը մնուցանեն մանուկները Բարիզի մէջ և անոր չըջակայքը, բայց աւելի «մտածումի դօրութեամբ» քան ուղղակի դէմ յանդիման զննութեամբ կը քաղէր այդ տեղեկութիւնները, այսինքն անթիւ ընթերցումներու շնորհիւ, ինչպէս գիտել կուտար իր սիրելի բարեկամը Տարվին : Աւելորդ է պատմել իր կեանքին գիծերը . այդ այնքան երկար՝ այլ ծանրաշխատ զբաղումներով ջղասպառուած խանդարուած կեանքը չա՛տ կարճ համեստ պատմութիւն մը ունի . իր մտաւորական աշխատութեանց հոգէն դուրս՝ ոչ մէկ օտար հոգ : Նոյն իսկ չընդունեց ակադեմական պատիւները և մերժեց Թրանսայլի ճեմարանին թղթակից—անդամի տիտղոսը զոր քանի մը տարիներ առաջ իրեն կը շնորհէր Բարոյական և Քաղաքական Գիտութեանց Ակադեմիան :

Կարելի չէ՛ այս անձուկ սիւնակներուն մէջ մանրամասնօրէն քննել իր մտածումներուն պատմութիւնը : Տարվինի պէս և անկէ շատ աւելի վեր մտաւորապէս, բնաշրջական վարդապետութեան համոզուած առաքեալ մըն է, հաստատելով թէ բոլոր մարդկային զգացումները որոնք ա՛յնքան կնճռոտ և բարձր կ'երեւանայ այսօր, իրենց ծագումը ունին իրենց հարկաւորութեան կամ իրենց օգտակարութեան մէջ՝ անհատին և տեսակին պահպանումին համար : Սիրոյ զգացումը, օրինակի համար, բեղմնաւորութեան պէտքէն, կեանքին կամեցողութեան անպատճառաբանուած զօրութիւնէն ծնած է : Բնութիւնը իրեն կ'երեւայ իբրև արդիւնքը բնաշրջութեան խիստ օրէնքներուն, «բարերար և չահաւէտ հարկաւորութեան մը» գործը : Բայց իր դաս-

սիարակութիւնն անուն երկարժամանակեայ փոքր ուսումնասիրութիւնը որ իր գործերէն ամէնէն համբաւուածն է բոլոր աշխարհի մէջ, հակառակ այս գիտական հաստատումին, կ'ընդունի թէ մարդկութիւնը իր զարգացումին անհրաժեշտ ընթացքին մէջ՝ ժառանգականութեան և բնաշրջութեան անգիտակից կամքերէն առաջնորդուած, այլևս պարտականութիւնը և հետևապէս կարողութիւնը պիտի ունենայ ուսանելու ամբողջական առարկայական ուսանումով, բնութիւնը իբր միջոց մը միայն գործածելով իր կատարելութեան լրումին: Սբէնսըր այնպիսի կատարելութիւն մը կ'ըմբռնէ ուր մարդիկ անճիգ կերպով, «մեքենականօրէն» պիտի գործադրեն բարի արարքները, բոլոր այսօրուան դժուար կատարելի առաքինութիւնները: Տեսակ մը բարոյական վեհութիւն կայ այս իտ'ալին մէջ, երանութեան կրաւորական ջիղ մը, անգիտակիցօրէն պարտաւորուած առաքինութիւններու լծացած ցուցահանդէս մը:

Ամէն քննադատ համամիտ է թէ իր Դսս սիարակութիւնը պիտի ապրի մշտնջենապէս, աւելի ապահով կերպով քան իր Առաջին սկզբունքները, կենսաբանութեան սկզբունքները, հոգեբանութեան սկզբունքները և բարոյականի սկզբունքները որոնք ճշմարտապէս փրկստիպական հզօր մտքի մը անձնական յղացումները կը պարունակեն աւելի՝ քան գիտական երկարաշունչ հայեցողութիւններ: Սբէնսըր ուսուցումի տեսակէտով՝ ինչպէս նաև իմացականութեան զարգացումի տեսակէտով, բոլորովին թափուր և անօգուտ կ'ընդունի դրական դաստիարակութիւնը դպրոցին մէջ և անոր տեղ կը դնէ գիտական դաստիարակութիւնը ուր աշակերտը կոչուած է զարգացնելու իր իմացականութիւնը բնութեան դէմ յանդիման հայեցողութեամբ. իրերէն պիտի երթայ կանոններուն և ընդհանրացումները ու գաղափարները, հին դաստիարակութեան կանխադրած գաղափարներուն ճնշումէն զերծ, ուղղակի պիտի հետևեցոյն իրերուն մանրազննին հայեցողութենէն: Աւելորդ է ըսել թէ Սբէնսըր չհասած է իր դատը, ինչպէս Առակօ չհասած պէտք է ըլլայ նոյն այդ դատը կամաւորինի դէմ:

Եթէ գաղափարները, առաջունէ, տառնց բնութեան հայեցողութեան հարկադրութեան, մանուկ աշակերտին մտքին վրայ ճնշելու պենք, ինչպէս կ'ընեն միշտ մեր մէջ, օրինակի համար կրօնքի դասը փոխանակ բարձրագոյն կարգին՝ ամէնէն յետին կարգը դնելով իբր մանկավայել առարկայ՝ աշակերտը կը շուարի կամ մեքենականօրէն սորվելով բանաձեւերը կը կրաւորականացնէ իր միտքը, կ'անդամալուծէ իր անձնական դատողութիւնը, և իրերը, ամբողջ բնութիւնը և ամբողջ գիտութիւնը կը յանձնէ ծուլութեան: Եւ ահա՛ կը գտնենք մանուկ մը որ իրերը գիտելով տարբեր գաղափարներու կը հասնի: Մինչև հոս կը խոնարհի գիտական դաստիարակութիւնը. — Ի՞նչ վսեմ խոնարհութիւն...

Անուրանալի է տարամերժօրէն գիտական դաստիարակութեան մը բարոյականութիւնը. — բնական օրէնքներու հետամտելով՝ ընդհանրացումներէ ընդհանրացում և վերլուծութիւններէ վերլուծութիւն՝ մարդ կը հասնի Տիեզերքին միակ իսկութեան մը, միակ իմացականութեան մը:

Հէրպերթ Սբէնսըր կ'ընդունի թէ գիտութիւնը երբեք չի կրնար անկրօն ըլլալ, եթէ չի կրնար այսօր աստուածաբանել, վասն զի ինչպէս մարդուն համար՝ նոյնպէս տիեզերքին համար կ'ընդունի նպատակ մը հիներուն պէս և հետեւապէս անձնօթ սկզբնապատճառ մը, ինչ որ դուրս է Գիտութենէն, Գիտութիւնը ըլլալով միայն երկրորդական պատճառներու ուսումնասիրութիւնը, յաւէտ սահմանաւորի մը մէջ սողոսկող: Կրօնական խօսքեր առատ են իր գործերուն մէջ. նոյն իսկ յառաջ կ'երթայ ըսել թէ ո՛չ միայն գիտութիւնը հակառակ չէ կրօնքին, այլ թէ միայն գիտութեան մարդն է կրօնականը. — «Միայն գիտութեան մարդը, ա՛յն որ, հասարակ ստորին ճշմարտութիւններէ վեր, կը փնտռէ ամէնաբարձր ճշմարտութիւնները. միայն գիտութեան ճշմարիտ մարդը կրնայ իրապէս գիտնալ թէ մարդկային ըմբռնումէն որքան վեր է տիեզերական կարողութիւնը, որուն արտայայտութիւններն են Բնութիւնը, Կեանքը և Մտածումը...»

Հոս կանգ կ'առնէ Սբէնսըրի մտածումը, ինչպէս Սբէնսըրի կեանքը, խորունկ ալլասիրութիւն մը նեղնչելով, և իր վրայ հիացողներուն թողլով Աստուծոյ գաղափարին աւելի յստակ զգալութեան մը ճիգը և վախճանը ապագային մէջ:

ՆԴՈՒՍԱՐԴ ԴՕԼԱՆՃԵԱՆ

ՍԱԼՈՆԻ ԱՍՈՒԼԻՍՆԵՐ

ՆՈՒՆԵՐՆԵՐՍ

Մեր գրչի աշխատանքներուն համար մասնաւոր տկարութիւն մը ունիմ, չեմ գիտեր որ ուշադրութիւն ըրած էք թէ ոչ:

Անցեալ տարի, ճիշդ այս ամիսներուն, երբ երեւակայութիւնս կը գրգռէի՝ բոլոր մեր գրողներուն մէյմէկ նուէր գտնելու համար կաղանդի առիթով, չյաջողեցայ:

Պատճառը թերեւս անսիրտ ըլլալս էր գրական հրապարակի վրայ և կամ աւելի ճիշդ պիտի ըլլայ ըսել, պէտք եղածին պէս չէի կրցած տակաւին ուսումնասիրել մեր գրադէտներն ու գրագիտութիւնները:

Հեռուէն շատ մը բաներ գուշակեցի, որոնց իրականութեան վրայ տարակուսելու պատճառ մը չեմ գտած դեռ, — երազուած դէմքեր, տոգոյն, ցաւակոծ էակներ, միամիտներ, քանքարաթաղոյցներ երեւակայեցի, ու է՛ն վերջը, միտքիս մէջ այդ բիւրեւանք և տարբեր անձերը դասաւորեցի կարգով:

Հիմա, հրապարակաւ անակնկալ մը ըրած ըլլալու համար մեր գրադէտներուն, փափաքը կըզգամ գրի առնելու բոլոր այն մաղթանքները, նուէրները, զորս ըրի ու պատրաստեցի հազար ինը հարիւր երեքի տարուան շրջանին մէջ... հազար ինը հարիւր չորսի կաղանդին համար:

Ուրեմն կաղանդի նուէրներ՝ ասոնք՝ չէ՞:

Բայց աւելցնեմ որ, չելլէ՛ք անհամբերութիւն ցոյց տաք, որոշուած ժամէն առաջ ստանալու համար զանոնք: Հիմակուքնէ երկիւղածօրէն ձեր կաղանդի նուէրներուն ըստպատեցէք, սիրելի բարեկամներս և բարեկամուհիներս, և հաւատացէ՛ք, փոխարէն բան մը չեմ ուզեր, ոչի՛նչ մը, եթէ կը հաճիք, ձեր... չնորհակալութիւնը միայն:

Այսպէս, իբր Ամանորի նուէր, պատրաստած եմ:

Բրիգանթին՝ Հայու-կնիկներու ալպօմ

մը, հրապուրիչ կողքով և շքեղ կազմուածքով:

Մուսեղ Վարդապետին՝ չինական սենեակ մը:

Ա. Ալպոյանեանին՝ Արմենակ Հայկունիի կիսանդրին:

Մկրտիչ Անեմեանին՝ Պուալօի «Արուեստ Բերթողական»ը:

Արամ Անտոնեանին՝ ոսկեղօծ և արծաթապատ... կլկակ մը:

Աղեֆա. Փանոսեանին՝ գրական կաճառի կարմիր gilet մը:

Սիպիլին՝ մէկ-երկու շաքաթաթերթի այս տարուան բացառիկ թիւերուն յատկացնելիք յօդուածներուն վերնագիրները:

Աբիկ Մուպահեանեանին՝ Նպաստից Յանձնաժողովին օժանդակ — անդամակցութեան քուէ մը:

Բաբգէն Վարդապետին՝ միւռնի ծաղիկներու երփնագոյն փունջ մը:

Մ. Ա. Պարսամեանին՝ օղային առկալս դղեակ մը, որուն մէջ իր երգած կապոյտներու պարիկը ապրէր:

Փայլակին՝ ձի մը իր պտոյտներուն համար:

Եննվէ Արմենին՝ ուսումնական ու գեղանի աղջիկ մը, որ միեւնոյն ատեն ինը հարիւր ոսկիի հնչուն գումար մըն ալ ունենայ, իր օժիտի անտուկին մէջ: Ո՛չ աւելի՛ ո՛չ պակաս:

Զարմայրին՝ փիւրն մը:

Տիրայր Վարդապետին՝ ոսկիով լեցուն քրտակ մը, որպէսզի ասոր անոր բաժնէ:

Սիրայրին՝ Ժողէֆ Կաունիէի «Տնտեսագիտութիւն»ը:

Գ. Զարուհիին՝ յոյն սպասուհիներու վէպ մը:

Լիոնեին՝ Թրանսլալեան աղամանդ մը... ետքն ինծի վերադարձնելու պայմանով:

Յ. Գ. Մըմրեանին՝ Տէրոյնցի վերարկուն:

Ա. Այվազեանին՝ ճամբորդութեան ձրի տոմոակ մը որուն միջոյաւ կարենայ ուղած ատենը երուսաղէմ երթալ ու գալ:

Գր. Մալխասին՝ հայելի մը:

Ս. Դաւթեանին՝ երկոտանեակ մը վը-

կայեալ վարժուհիներ :

Ձիթք-Սարաֆին՝ ժիւլ-Վէռնեան valise մը :

Յակոբոս ձեկեղեւանին՝ ամպիոն մը :

Միհրան Ուղուրեանին՝ նաւակ մը Մօսայի ծովախորշին մէջ :

Ռ. Որբերեանին՝ ֆաննին... եթէ կարենայի՝ գտնել, սակայն :

Տովիմօին՝ մենախօսութիւն մը— «Թէ ինչո՞ւ ամուսնացայ»—Ալիսայանին կողմէ գլուռած, Հիւանդանոցի յառաջիկայ Նուագահանդէսին մէջ արտասանելի :

Հովիսիմեին՝ Սասկան վարդապետին հրատարակած քարոզադիրքը :

Հակակնոյց Մառէին՝ Աղջկան մը Օրադիրէն քաղած հատուածներու հաւաքածոն :

Վահան Թեկեանին՝ ահագնադժոխէ դանգակ մը, Աքիլլէսին հետ զարնելու համար :

Յ. Դուրգեանին՝ Ռաուլ Բօնշօնի ծանօթ բանաստեղծութեան գրաքար թարգմանութիւնը :

Ե. Գօլանեանին՝ Մաքս Նօրտուուի գործերուն հաւաքածոն :

Հ. Ասասուրին՝ Իզմիրեանց Գրական Յանձնաժողովին յառաջիկայ մրցանակը :

Վահան Թեկեանին՝ Ուսումնական Խորհուրդի խմբանկարը :

Բայց ո՞ր մէկը ըսեմ, այնքան շատ են նուէրներս, ու այնքան բազում՝ մաղթանքներս :

Ուրեմն սպասեցէք, կաղանդի՛ն սպասեցէք, սիրելի բարեկամներս և բարեկամուհիներս :

ՄԱՌԻ ԵՌԱՅԱՆԵՒՍԵԱՆ

ՀՈԳԵԿԱՆ ՆՐՔՈՒԹԻՒՆՆԵՐ



Կան տարօրինակ իրիկուններ, վերջալոյսեր, երբ կարծես թէ հոգի կ'առնեն անշունչ բոյսեր, Մթնոլորտին խաւերուն մէջ, եթերն ի բուն կը տատանի հսկայ զղջում մը ծփծփուն, Ու ամէնէն գաղտնապահ սիրտն իսկ այդ պահուն

կը փախցնէ շրթունքէն յամր հառաչ մ'անհուն :
Ո՛հ տարօրինակ իրիկուններ, վերջալոյսեր՝ երբ կարծես թէ հոգի կ'առնեն անշունչ բոյսեր՝ ես ալ կ'ըլլամ հեղիկ, քաղցրը, գորովագին,
— Ինչպէս մի կին :

Առտուններ կան անամպ, պայծառ, երբոր վարդեր Պշտոտ ժպտով մը կը բանան իրենց թերթեր, երբոր գուարթ ու անթախիծ խայտայ հոգին, Ականակիտ ջուրերուն պէս ջինջ առուակին, Սիրտը գարնան մէկ առտուն պէս խնդալից Հոգին անբիծ, միտքը հանդարտ ու անկակիծ :
Մ՛հ, առտուններ անամպ, պայծառ, երբոր վարդեր Պշտոտ ժպտով մը կը բանան իրենց թերթեր, ես ալ կ'ըլլամ ուրախ, գուարթ, խնդումբերս
— Տղու մը պէս :

Կան գորշ օրեր, երկինք տխուր, ամպեր ցած, երբոր սիրտն ալ ինքզինքէն ձանձրացած, Կուզէ նետել վերջին ակնարկ մը յետախօյզ, Ասպարէզին վրայ կեանքին որ կուտայ խոյս, Եւ տասը դար ապրած մէկու մը նման Կեանքը թուի տարտամ նկար մը անկենդան :
Ո՛հ գորշ օրեր, երկինք տխուր, ամպեր ցած երբոր ես ալ, ա՛լ ինքզինքէս ձանձրացած, կ'ըլլամ գողցես, կորաքամակ, ցնդած, անպետ
— Մէկ նահապետ :

Գիշերներ կան տխուր, անվերջ—ո՛հ մէյ մէկ դար— երբ տառապանք սիրտս կ'ընէ պատառ պատառ, Եւ երբ հոգիս յորձանքներուն յատակն իջած, Արհաւիրից անասմանին եղբէն յանկարծ, Անդունդին պաղ շունչը կըզգայ ճակտին վրայ, Եւ կընկրկի քայլամուտ, կը սարսուռայ :
Գիշերներն այն, տխուր, անվերջ—ո՛հ մէյ մէկ դար— երբ տառապանք սիրտս կ'ընէ պատառ պատառ ես ալ կ'ըլլամ խոր ստուերին մէջ լուռ ու մունջ
— Դիակ մ'անշունչ :

Թարգմ. ՓԱՅԼԱԿ

ԱԼՊԷՌ ՍԱՄԷՆ

ՏԱՂՏԿԱԼԻ ՀԱՐԿ ՄԸ

Տաղտկալի՝ գրողէն աւելի ընթերցողներուն համար, կը խոստովանիմ: Բայց վերջին անգամն է, կը վստահեցնեմ Մասիսի խրմբագրութիւնը:

Գուշակեցիք անշուշտ թէ խնդիրը Գրիգոր Մալխասի ծանօթ բանավէճին՝ վրայ է:

Անկեղծապէս պէտք է ըսել, թէ այս պարոնը կարգի դառու և ուղիղ գծին մօտեանալու վրայ է, բայց որքան՝ դանդաղօրէն ու ինչ դժուարութեամբ: Հակառակ իր նախորդ բացորոշ յայտարարութեանը, — թէ մինչև որ Տիգրան Ելքէնճեան իր ստորագրութեան տակ չըստանձնէ պատասխանատուութիւնը իր ղիտողութիւններուն, ինք՝ Պ. Մալխաս՝ չպիտի պատասխանէ անոնց, — այս անգամ պատասխանելու փորձ մը և սկզբնաւորութիւն մը ըրած է ինքնաբերաբար, Ընդհանուր գաղափարներ վերնադիրը կրող ծուկէս սինակնոց յօդուածով մը: Համակերպութիւն մը, որ Բօթի թարգմանչին *supplésser* կամ ձկունութիւնը ցոյց կուտայ: Այս առաջին բարենչան երեւոյթ:

Յետոյ, Պ. Մալխաս կը խոստովանի թէ Բագրատունիի վրայ իր նախապէս հրատարակած երեք յօդուածները քննական ուսումնասիրութիւններ չէին (գիտէինք արդէն որ ատանկ յաւակնութիւն մը չէր կրնար ունենալ), այլ՝ մեր ըսածին պէս՝ քարիձներ: Բայց որովհետեւ այս ռամկական բառը պիտի պլաշկեցնէր իր գրածներուն արժէքը, այսինքն իրենց իսկական համեմատութեանը իջեցնէր, հարկ կը տեսնայ բացատրելու թէ անոր գիտական համարժէքն է *introduction*, այսինքն ցերեպութիւն: Այս ալ աղէկ:

Բայց երբ կարգը կուգայ Տիգրան Ելքէնճեանի ծանօթ ղիտողութեանց, Պ. Մալխաս նորէն կընկրկի և փոխանակ մէկիկ մէկիկ պատասխանելու՝ իր իսկ բացատրութեամբ՝ «երրեակ բանաձեւ»ին, ուր մասնաւոր իշխան ինչ որ կար սխալ ու հակասական՝ իր գրութեան քննարկումն մէջ, ընդհանուր ղիտողութեանց լարիւրինթոսի մը մէջ կը մոլորի և կուզէ կորսնցնել տալ վիճաբանութեան թելը:

Այդ «երրեակ բանաձեւ»ը, որ հրատարակուեցաւ Մասիսի հոկտ. 24ի թիւին մէջ (աշնան վերջերն էինք, ու ձմեռը հասած է արդէն՝ տակաւին իր պատասխանը չի գտաւ Պ. Մալխասի կողմէ, կէտ առ կէտ, առանց խուսափումի:

Ահա՛ որոշ և դրական իրողութիւն մը զոր ուշադրութենէ չպիտի վրիպեցնեն բնաւ այս բանավէճին հետեւողները, նոյնիսկ եթէ Պ. Մալխաս հատորներ լեցնելու չափ բան գրէ, մինչև որ... «սարսուռի իր տոպրակը», — այս գողարկի բացատրութիւնն ալ իրմէ փոխ կ'աւանմ:

Վերջին կէտ մըն ալ, խնդրէն բոլորովին դուրս:

Պ. Մալխաս, յայտարարելէ ետքը թէ չուզեր չափաւանց համեստ ըլլալ՝ չիչելու համար իրեն նպատաւոր վկայութիւնները^(*), իմ գրածներուս ակնարկելով կ'աւելցնէ. «Երբ, միւս կողմէ, չահագիտութեամբ ներշնչուած քրօնիկագիր մը կը չարախօսէ իմ մասին»: Կ'երեւայ թէ այս պարոնն ալ բոլոր նուեր է այն կարգ մը գրողներու կամ խրմբագիրներու հիւանդութենէն, սրոնք որ և վիճաբանութեան մէջ՝ զօրաւոր կուռն մը գտած ըլլալ կը կարծեն, չահագիտական նշկատում վերագրելով իրենց ընդդիմախօսին: Եթէ իմացած կամ գիտցած չըլլայի մտքի այն անհաւաստը՝ ջղազրգիւ վիճակը, որուն մէջ գրի աւանուեր է այս յայտարարութիւնը, ի հարկէ պիտի հրաւիրէի անոր հեղինակը՝ նոյն այն ծաղկաբոյր թերթին մէջ ուր երեւցան այս աղտոտ տողերը, լուսաբանել և բացատրել անոնց իմաստը:

Իրաւ. կ'ըսէք, Պ. Մալխաս, այս գուտ գրական ու լեզուաբանական խնդրին մէջ իմ գրածներս չահագիտական ներշնչումի արդիւնք ու չարախօսութիւն էին: Ուսկի՞ց ալ սորվեցաք այս ուռուցիկ պարբերութիւնները: Կ'ենթադրեմ որ զանոնք հրատարակող չաբաթաթերթին տնօրէն-խմբագիրը չի տեսաւ դանոնք. ապա թէ ոչ, ինքը պիտի զգացնէր ձեզի՝ կատարեալ պաղարկունութեամբ՝ թէ ձեր շուարանքին մէջ՝ սխալմամբ... ի՛ր իսկ դուռը ափ առեր էք: Ասիկայ կը գերադանցէ ձեր մինչև հիմա ըրած բոլոր *gaffes*ը:

ՄԵՆԱՍԷՐ

Քերտ. 4 դեկտ. 1904

Հիմնագրքի

ԲԱՍՔՈՒՍԼԱ ԻՎԱՆՈՎԻՉ

3.

(Pasquala Ivanovitch)

Իրեց. Բիէթ 10թի.

Քարգմ. Չիճթէ-ՍԱՐԱՅ.

Ժամը վեցին համբայ կ'ելլանք, բայց ծովուն վրայ թնդանթածգութեան փորձեր ընելու համար: Ժամը իննին հեռուններն ենք արդէն: Աղբրականը խաղաղ է ու կապոյտ: Ամբողջ օրը, աղբուր արեւի մը տակ, հրետածութիւն, ահագին աղմուկ ու մեծաքանակ ծուխ: Նշւերը մարդանքներ կը կատարեն: Ռուս ու Ֆրանսացի սպաներ ներկայ են իբր հիւր: Իրիկուան, ատոր հետեւութիւնը կ'ըլլայ միջադպարին մեծ ճաշ մը: Գիշերուան մօտ կը վերադառնանք Պօղիլի ծովախորշը: Ծառայութեան կարգը իմս է, ժամանումի ատեն, ինչպէս նաեւ գիշերային պահակութեան մէջ, կէս գիշերէն մինչև առտուան ժամը չորս:

Բասքուալա Իվանովիչը վաղուքնէ առաջ պիտի չիլինամ տեսնալ:

Թ

30 հոկտեմբեր:—Տասը օր ալ անցուցինք Պօղիլի առջև:

Սա ստակալի լեռները կարծես պարիսպ մը կը ձևալանն հոս եղած բաներուն և ալխարհի մնացած մասին միջև. ես ալ քիչ քիչ կը վարժուիմ հանգարտ ու լայն այս ծովածոցին և ալխարհէ քաշուած, մեկուսի այս տնկիւնին: Հետզհետէ սլաւերէն բառեր կը սորվիմ Բասքուալալէն և բոլոր լարեմքիտ լեռնականները կը ճանչնան զիս:

Աղբուր, անգործ օրեր՝ զորս կ'անցընէի այդ անձայն լեռնավայրերուն մէջ, թափառելով այդ պղտիկ ստուերախիտ ուղիներուն մէջ, որոնք կը բարձրանան կամ կ'իջնան գահալէժ, միտնիկ երով, վարդակարմիր թաղթերով ու պտերներով եղերուած: Հեռուէն հեռու, անտառակներու թաւ դալարութիւններուն տակ. կը հանդիպիս ժամանակին աղբուրներու տակ մաշած քարերով շինուած գիւղակներու, որոնք անդունդներու վրայ հակած՝ չես գիտեր ինտոր կը բռնեն ինքզինքնին: Հոնտեղի բնակիչները վախկոտ ու

վայրենի երեւոյթ մը ունին. բայց հիւզակները վարդապտուկներով ու ծաղկած նարնջներով են չրջադառուած:

Իրպուածաբար կը պտտկիմ այժի ոտքերու համար շինուած այդ արահետներուն մէջ և երբեմն երբեմն, ոտերուն մէջտեղուանքէն, վարը, ապեցոցիչ խորութիւններու մէջ, կը նշմարեմ կապուտակի ջուրը՝ որուն վրայ մեր նաւախումբը կը նիրհէ. և կամ, օդին մէջ, թեթեւ ամպերուն մէջտեղուանքը, կ'ընդհամարեմ Մօնթէնէկրօի քարէ ծամածանքները՝ որոնք վերը, շատ վերը կը լողանան արեւուն լոյսին մէջ:

Աշունը. Միջերկրականի այս երկիրներուն սիրալի եղանակն է: Լեռնավայրերէն անուշ հոտեր կուգան և անտառակները զմայելի են: Արեւը որ կը յամենայ հոս, մեղրոտ թուզերը, կարհրագեղ նուռերը ու նարինջները հասունցնելու համար. ամէն օր կ'այցելէ կարգ մը լեռնային ծախսորշեր և կը տաքցնէ ամառուան բովանդակ ծաղիկներովը պճնուած ճշմարիտ եղեմներ, մենաշնորհնալ և զգլխիչ ծակուծուկեր:

Ապառաժներուն մէջտեղուանքը, ամէն կողմ կ'աճին թղենիներ, որոնք գետինները, ճամբաներուն վրայ կը ցանցնեն իրենց քաղցրահամ պտուղները:—Ուղողը կրնայ ժողվել:—Հապա նռնենիները. անտառակները լեզվեղուն են անոնցմով. իրենց աղբուր պտուղները կը ճալթին ու հատիկ հատիկ գետինը կը թափթփեն, մաժուռ ու չոր տերեւները ծածկելով մանտարիկ մարգրիտներով՝ որոնք կարմիր յակինթներու կը նմանին: Ուսող չիկայ այդ նուռերը. բայց երբ շատ ծարաւըլլաս, քարի հարուածով մը կը ճեղքես զանոնք և կը խմես մէջէն վաղող պաղուկ, բուրբուխաւէտ ու վարդագոյն ջուր: Բասքուալալէն սորվեցայ ադ եղանակը:

Եւ, ամէն իրիկուն, երբ ոսկեղօծ յետին

ցողքերը կը մարմրին լեռներուն քարէ կատարներուն վրայ, երբ մութը կը կոխէ խոր հովիտներուն մէջ, կուգայ այն ժամը՝ ուր վերը, անտառակին մէջ, ամէն իրիկուն, Բասքուալա խնձի կըսպասէ:

ժ.

31 հոկտեմբեր:—Այսօր կիրակի էր և առաջին անգամ ըլլալով ցամաք ելլալու արտօնութիւն տրուեցաւ նաւախումբին բոլոր նաւերէն մաս մը նաւազներուն՝ որոնք ամէնէն բարեբարոյներուն մէջէն էին ընտրուած:

Իրենց այցելութեան առարկայ եղած էր, Պօզիչէն՝ քաղելով երկու ժամ հեռու, Քասթէլնուօլօ կոչուած հնամենի, պղտիկ քաղաքը, որ միակն էր շրջակայներուն մէջ և ուր մեծ ժխոր էին հաներ: (Քաթարօ, շատ աւելի հեռու էր և ցամաքի ճամբով երթալ կարելի չէր անոնց համար):

Իրիկուան ժամը ութէն ինը, Բասքուալաին հետ նստած էի մրտենիներուն մէջ, Քասթէլնուօլօի ճամբուն եզերքը. կը զուարճանայինք դիտելով անցնիլը յետամնացներուն՝ որոնք կը փութային վերադառնալ Պօզիչի առջև կեցած իրենց նաւերը: Իրիկուան լուսնիւնը, ծղրիթներուն կանոնաւոր շնչիւնը, երբեմն երբեմն կը վրդովուէին անոնց աղմուկէն՝ զանազան լեզուներով, իրենց երկիրներուն երգերը կ'երգէին:

Ամէնէն խպրիկները ապահովաբար, ահաւելիօրէն գինով չորս նաւազներ էին, որոնք հետեւներին կը տանէին անճանաչ բան մը՝ որ իր կարգին ծայրայեղօրէն լօլիկ եղած ընկերմըն էր: Մեծ խնամք կը տանէին անոր. մինակ թէ, որովհետեւ զայն մինչև Քասթէլնուօլօն բերելուն համար չարաչար յողնած էին, հարկըր մէթըր անգամ մը դետինը կը զնէին զայն և վրան կը նստէին, հանգստանալու համար: Եւ յետոյ, նորէն կըսկէին քաղել, սլաւական տաղերգութեան մը եղանակին հետ համաքայլ:

Այդ տեսարանէն, որ լուսինի լուսով յուղարկաւորութեան մը կը նմանէր, վախցաւ Բասքուալա և իր հիւզակը փախաւ:

Ամէնէն վերջը անցան, տասը Աւստրիա-

ցիներ, ուրախ զուարթ, պարզուկ և սիրուն երգ մը երգելով: Ատոնք տեսան զիս և կանգ առին, գինովներու յատուկ դրաւ մը բռնելու համար, թէ ի՞նչ ազգութեան կը պատկանէի ես հաւանօրէն: Յետոյ անոնցմէ մէկը, գտակը հանելով, հազար նազով առաջացաւ, և խնդրեց ինչ որ հաճիմ ընտրի իրենց իմ ազգութեան անունը:

Բերնիս եկածը ըսելով, պատասխանեցի թէ Ֆրանսացի եմ. այն ատեն, ի՞նչ խանդավառութիւն. ամէնքն ալ եկան ձեռքս սեղմեցին և հրաժեշտ առին իւր Ներդուլիւն խնդրելով, զիս անհանդիստ ըրած ըլլալուն համար:

Եթէ երբէք, բերնիս գալով, քմահաճօքը ունեցած ըլլայի «Իտալացի եմ» ըսելու, խիստ հաւանօրէն կուտփի հարուածներ պիտի ուտէի: Եւ սակայն, իրենց ալ խօսածը Իտալերէն էր. Տալմաթցիներ էին անոնք, ինչպէս բոլոր Աւստրիական նաւազները, և իրենց հակառակորդներուն լեզուն, իրենց լեզուն էր:

Հետաքրքրական է գիտնալ թէ որչափ բարեկամ են իրարու Ֆրանսացիները ու Աւստրիացիները:—Մեր բարեխոնական նաւախումբին մէջ՝ ուր ամէն մարդ ստիպուած է եղբայրակցիլ ամէնուն հետ, ցեղային համակրութիւնները ու ատելութիւնները նորէն ունին իրենց տեղը:

ժ.Յ.

Նոյեմբերի 15 Նոյեմբեր:—Ահաւասիկ երկու շաբաթներ ևս անցան դացին... Ուրերը կը սահին, ուրիշներուն համար ձանձրալի,—հեշտին ու քաղցր՝ ինձի համար.— Բասքուալաին կամ այս երկիրին հմայքն է որ... Ես ալ աղէկ մը չեմ գիտեր թէ ո՞րն է. երկուքն ալ՝ ապահովաբար:—Բայց հիմա բան մը կը կապէ զիս այս տեղին, և երբոր մեկնելու պարտաւորուիմ, յաւով պիտի բաժնուիմ Պօզիչէն:

Ամէն օր լուրերը իրարու կը յաջորդեն և իրար կը հակասեն: Վերջապէս, մենք ալ որոշ բան մը չենք գիտեր. կարծես մեղի հոս մոռցեր են, ալ կարելի չէ նախատեսել թէ ե՞րբ պիտի գայ մեկնումի ու Անգլիա վերադառնալու հրամանը:

Նոյեմբեր:—Հիմա՛ հոս, ջերմիկ ու ան-
վերջով այն եղանակն է՝ ուր, անտառակնե-
րու կարմրած տերեւները կըսկսին թօթափիլ
եղած վերջին պտուղներուն հետ, եղանակ՝
ուր վարդատունկերը, նարնջենիները և մըր-
տենիները նորէն կը ծաղկին: Մեր չորս կող-
մը, այնչափ աղուոր է ամէն բան ու այն-
չափ անդորր, ողը այնչափ մաքուր է, և
անտառակներուն մէջ անանկ մեծաքեղ է
տեսիլը որ ամէն բան կը մոռնաս ալ, դիտե-
լու, շնչելու, ապրելու հոգեղմայլ յափշտա-
կութեան մը մէջ:

Վայրկեաններ կան որոնք չես գիտեր ին-
չու, աւելի հմայիչ են միեւնոյն ժամուն
միւս վայրկեաններէն և որոնք՝ միտքէդ չեն
ելլար բնաւ:

Այդպէս էր այն օրը, —ամառունէ մնա-
ցած տաքուկ օր մը, — ուր մամուռին ու
դեղնած տերեւներուն վրայ քունս տարած
էր, — ժամը երկուքին ատենները, — և նո-
յեմբերի արեւը, ճառագայթարձակ կը նշու-
լէր անձայն ու անշուկ լեռնավայրերուն
վրայ:

Մէկէն արթնցայ հովիտի մը աղաղակէն՝
որ մեծաձայն և իտալական չեչուով մը, իր
Թրօֆիմ բարեկամը կը կանչէր:

«—Թրօֆիմօ, Թրօֆիմօ»: Զայնը ուժով
կը կոխէր վերջնութեւ վանկին վրայ և կեր-
կարածգուէր վերջաւորութեանը հետ, հե-
ռուէն՝ կրկնուելով միշտ, անտառակներու
լուռութեան և արեւոտ լեռներու հնչունու-
թեանը մէջ:

Երբոր աչքերս բացի, ոչ Թրօֆիմօ տե-
սայ, ոչ ալ զայն՝ որ հովուական այդ կոչը
արձակեր էր. բայց ոստերուն մէջէն ու վե-
րեւս, գրեթէ երկինքին մօտ, տեսայ Պօղիչի
հնաւուրց մատուռը՝ որ իր ապառաժին դա-
գաթը թառած կը մնար, — և անոր քովի
նրբուղիին մէջ, Բասքուալան՝ որ իր ոչխար-
ները առջին ձգած, վար կիջնար, հեռուէն,
սլաւական եղանակ մը երգելով մեղմաձայն:

Նմանապէս այն օրը՝ ուր երկնցեր պառ-
կեր էի քարաքոսին վրայ, ցանցառուտի մը
մէջ՝ ուր հողը գորշգոյն խճուտներով էր
ծածկուած: Գետինը, չորցած սէղեր. յետամ-

նաց ու բարձրացողուն քոսենիներ և եղա-
նակավերջի ծաղկուկներ: Օղը գրեթէ զով
ըլլալ սկսած էր, և աշունի ու չորցած տե-
րեւներու հոտ կուգար կարծես մէջէն:—Ե-
տիւ, ոսկեվառ մացառուտքին քսուռաւորե-
լու և խոտը խուզող ոչխարներու աղմուկներ
մը լսեցի:—Բասքուալաի հօտն էր որ կը
հասնէր արագաքայլ, — ետեւէն ալ ինք, ժըպ-
տելով խալըիկ երեւոյթովը վաքրիկ վայրե-
նուհիի մը, որ մտադրած է կատակախաղ մը
ընել և մեծ զգուշութիւն կ'ընէ աղմուկ չի
հաճելով, քեզ յանկարծակիի բերելու համար:
Ապահովաբար իրմէն է որ կը բղխի այդ
վայրկեաններուն հմայքը...

Ճորեկուան մեր ժամադրութիւնները կ'անց-
նին խելօք ու բոլորովին անմեղունակ կեր-
պով մը:

Բայց իրիկուան, կարծես տեսակ մը խը-
ռովիչ բան կայ օդին և այդ անտառակնե-
րուն բուրմունքներուն մէջ և զիշերուան
հետ մէկտեղ, տենդոտութիւն մը կը մտնայ
մեր մէջը:

Խեղճ պզտիկ մատուռ, որ Պօղիչի վե-
րեւը թառած ես արծիւի բոյնի մը պէս բարձ-
րահայեաց, հնաւուրց պզտիկ մատուռ՝ ուր
օր մը չէ օր մը Բասքուալա պիտի գայ քը-
նանալ մամուռին տակ... Զայն չուրջպատող
լոկի ցանկապատին մէջ, մէկէ աւելի ան-
դամներ կանգ առած ենք, շիրիմներու կամ
ձարխոտով ծածկուած պատերուն վրայ. վայր
անվրդով որուն առջև դմայլելի ու ընդար-
ձակ երկիր մը կը պարզուի բովանդակ:

Հոն, օր մը, Բասքուալա գորշեց զիս նա-
յիլ, քարէ հնամենի լուսանցքէ մը ներս,
տեսակ մը նկուղի մը մէջ, որ կը պեղուէր
ժամուն տակ:—Ոսկերանոյն էր... մահա-
սարսուռ ու խաղաղաւէտ՝ նոյն ինքն ոչըն-
չութեան պէս, — յետին վախճան՝ մարդկային
կեանքերուն:

Ներս սպրդող կիսալոյսին մէջ կը նշմար-
ուին կանչըցած գանկեր՝ որոնք կը դիզուին
խառնիխուռն. լեռնցի Սլաւներու, Բասքուա-
լաի նախահայրերուն գանկերն են ատոնք:

Եւ հոն, մեր երկուքին, երիտասարդ է-

ակներուս շուրջը, այս աճիւններուն քով, բնութիւնը կը ժպտէր ճաճանչագեղ ու յաւերժական. հեռավայրերուն ու ծովուն կապոյտներուն և անտառակներուն երկնեան գլանանչութիւններուն վրայ, արեւը յորդահոս կ'ալեծփէր. և ջերմութիւնով ու լոյսով ողողուն լեռնավայրերուն վերեւը մեղուներու զուարթ բզդիւններովը առլի լուսթիւն կը թեւածէր:

ԺԲ

Պօղիչի մէջ, օրերը միշտ միօրինակ են, և սակայն ես չեմ ձանձրանար տակաւին:

Ամէն իրիկուն, արեւամուտէն քիչ առաջ, մեղամաղձիկ այն պահուն՝ ուր քարէ լեռնակատարները կարմրավառ կը պայծառանան, և ուր՝ հովիտները մթութիւնով կը մածուին, — ամէն իրիկուն, սովորական միեւնոյն պետոյան է որ կ'ընեմ, ծովեզրն ի վեր երկարող ճամբուն վրայ:

Երկրին միակ ճամբան է աղ, որ Ռալուզա կը տանի: Հոնկէց կ'անցնին ձիով, մէկ քանի ցանցառ ճամբորդներ. հոնկէց կ'երթան ոտքով, նախընտրելով հովիւներ, իրենց լեռներէն իջած Մօնթէնէկրօցիներ, գործով եկած եւրոպացիներ, և չես գիտեր ուրկէ՛ց փրթած թափառաշրջիկներ: Արահետ մըն է աւելի քան թէ ճամբայ մը, սեղմուած՝ ծովուն ու մրտնիւի ցանկերուն միջև, և կամ ծովուն ու ձիթենիի տնկավայրերը եզերող և թաղթերով լեցուն, մոխրագոյն պղտիկ պատերուն մէջտեղը: Երբեմն աւաղի վրայ է որ կը քալես, երբեմն ալ ամենաձիւն սալայատակներու վրայ՝ որոնք Իլլիրեան թուականներէ են մնացած. ծովը ժամանակին հետ ձեռք ձեռքի տուած, կամաց կամաց կը կրծէ այդ ճամբան: Հեռուէն հեռու, սնակներ կը կէտկիտեն ճամբուն եղըր, — ագարակներ կամ վննետիկեան ոճով վաղեմի բնակութիւններ, — և կամ պղտիկ պանդոկներ, ուր ձկնորսներ կը ճաշեն և ուր արեւելեան ձեւով խահուէ կը խմեն, դուռներուն առջին նստած: Օր մը երբ հեռանամ այս երկրէն, երկար ատեն աչքիս առջեւէն պիտի չերթան ծովեզրին բոլոր այդ տնակները ու բոլոր բարի այն մարդուկները, որոնք իրիկունս, դուռնե-

րուն առջին, քարէ նստարաններու վրայ ու դեղնած ծառերու շուրջին տակ նստած, կը բարեւէին զիս, անկէց անցած ատենս...

Բասքուալէն է ապահովաբար որ կը բլթի բոլոր այս բաներուն հմայքը:

Կիրակի օրերը, նաւախումբին ներկայութիւնը, մասնաւոր ոգեւորութիւն մը առաջ կը բերէ այս ճամբուն վրայ. սպայները կը շրջագային. նաւագներն ալ կեղբայրակցին կա՛ր կը վիճին, կ'երգեն ու ժխոր կը հանեն:

Եւ յետոյ, կիրակի օրերը, հին դեղօրներու, վաղեմի դէնքերու առուծախը կայ: Բացօթեայ տեղի կուենան անոնք, նստարաններու վրայ, գեղջուկ պղտիկ պանդոկներու առջև, մեծաբերձ ծառերու հովա՛րին տակ: Լեռներուն ամէն ծակոճուկերէն կը նիկիկեր կիջնան վար, իրենց հին ու այլանդակ զարդեղէնները ծախելու համար: Եւ ծովախորին խորէն, մակոյկներով, արեւելեան տարազով մարդեր կուգան, իրենց երկրին ապրանքներէն ծախելու համար: Ամէնէն աւելի զիս կը հետապնդեն ատոնք, ինչու որ կը հասկնամ իրենց լեզուն, և մէկէ աւելի անգամներ կուգան զիս իրաւաբար կարգելու:

Բայց, անցած կիրակի, ի՛նչ հանդարտութիւն, ի՛նչ խաղաղութիւն կը տիրէր, բովանդակ երկրին մէջ: Բաց ի ծովափի այս ճամբայէն, ամէն կողմէ անտառակ է և սլոնի ու յատուկ արահետներ միայն կան, որոնք կը սողոսկին դէպի լեռները, դէպի ամպածրար վերնագաւառներուն վրայ թառած զիւղակները:

Շաբաթը գրեթէ մէկ անգամ, դէպ ի Գաթարօ պտոյտ մը, մասը կը կազմէ մեր վարած կանոնաւոր կեանքին: — Շոգեմակոյկով, երկու ժամուան ճամբորդութիւն մը: — Երբեմն երբեմն, կ'արժէ երթալ, քիչ մը աւելի քաղաքակրթուած, հնաւուրց այդ քաղաքը, ուրկէ կը գնենք զանազան պիտոյքներ՝ որոնք անձանթ են Պօղիչի մէջ:

(Շարունակելի)

Արսօնաքեր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՎԵԼԻՔ Օրագրի

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Զ Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Զ Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծային հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՐԵՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՉԷ ՓՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԵՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ զեղչեալ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահարածիւններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրողք ՉԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒԹԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրսեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԳԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համալ, Բասաժ Բաքրեք Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Ինայէթ Սան:—Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց ԻՆՉ



ՅՈՎԱԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Իեսպանատան

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Զբոսանեան աբաւքման

Պալապեան ամէն օր ակոյալի ամէն տե-

սակ հրահանգութիւններով տառապողները կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Գիրքերուն ո՛ր եւ է ժամուն կարելի է դիմել: Պալապեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու չինած ակաւները: Յորեկները ակոյալ քաշել տարու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կախեալ է:

Աղփասներուն ձրի

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ գաւազաններ եւայլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 չաբաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւս կ'առնուին. իսկ ապառիկ գրեւորներէն՝ 100ին 15 զեղչով:



ՌՕՍԻԱ - ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵՍՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուժազով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄ-ՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱԻՈՎ ՈՒՂԵՒՈ-ՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՄՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կոտ-րուելուն դէմ:

Ընկերութեան դրամադուլանք, ամբողջապէս վճարուած	10,666,667	Փրանք
Երաշխաւորութեան գումար աւելի քան	137,300,000	»

Ընկերութեան ապահովագրութեան վճարուած դրամա-գլուխ եւ վնասուց հատուցում	282,000,000	»
1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագին եւ տոկոս	54,000,000	»

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Աղաբեան խան, Վոյվոտա, Ղալաթիա, — եւ Ղալաթիոյ Գործակալութեան, Էսկի Կէօփրու խան, Քարափին վրայ:

ՍՐՄԱՔԷՇԻ ԶՈՒՐ

(ՊԷՅՔՕԶ)

Ա. Ե. ՈՐԺԱՀԱՄ, ԹԵԹԵՒ ՈՒ ՕԳՏԱԿԱՐ

Սոյն հանրածանօթ աղբիւրին ջուրը, ախորժահամ եւ վճիտ, յանձնարարուած է մայրաքաղաքիս ականաւոր բժիշկներուն կողմէ, որոնք անձամբ փորձած են անոր յատ-կութիւնները: Մասնաւորապէս, քիմիագէտ Պ. Բիէն Արէտի տարրալուծած է զայն եւ Թալտէլէնի ու Գանլըգավաքի ջուրերէն գերազանցապէս լուազոյն դասած է, ստուգե-լով որ անոր ջրաշփական աստիճանը 10 է եւ բնաւ ստամոքսի ծանրութիւն չիտար:

Տեղական հիւանդանոցներէն շատեր, իրենց բժշկապետներուն յանձնարարու-թեամբ, այս ջուրը կը գործածեն, որ ուղղակի աղբիւրէն կը բերուի ամենայն խնամքով եւ մաքրութեամբ, չիցրը ու տակառները հոն լեցուելով ու զմոտեւելով:

ՍՐՄԱՔԷՇ ԶՈՒՐԻՆ գերընտիր ու անմրցելի ըլլալը հաստատած են նաեւ, քի-միագէտ Տօքթ. Մանիէ գառ, հետեւեալ բժիշկները.

Տօքթ. Տուքա փաշա (ընդհ. քննիչ առողջապահական վարչութեան) Կապուչի, Զէրբի, Սթէքուլի, Ավիլիանօ, Մալլի, Միրապել, Բանալօթ պէյ, Պալիտիս, Քարաքովսքի, Բլէմով, Մօրթման, Տէլասուտա Ֆայիգ փաշա եւ Սիմօնֆ:

Վաճառման կեդրոնատեղիներն են՝ ԲԵՐԱ, ՄԵՃ-Փողոց, Հալէպ խան, Թ. 7:— ՊՈԼԻՍ, Սիրքէճի, Պապը-Ալիի մեծ պողոտային վրայ, Թ. 34 մթերանոցը, ինչպէս նաեւ Շուկային Եւրի Օսմանիէի գրան կից Թ. 21 խանութը:

Սոյն մթերանոցներուն մէջ կը վաճառուի նաեւ, ՍՐՄԱՔԷՇ ջուրէն դառ, Բա-րաքուլաքի ջուր: Դիտելը շատ ածան են ժողովրդեան դիւրամտելի ըլլալու համար:

Փորձի համար չէ՛ մը գնեցէ՛ք ՍՐՄԱՔԷՇԻ ջուրէն, եւ այնքան համով ու թեթեւ պիտի գտնէ՛ք, որ վստահաբար պիտի գործածէ՛ք զայն այսուհետեւ:

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵՍԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (ի վիեննա)

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՒՔՍ ԼՈՒՐ ՏԵ ՊԱՎԻԹ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդդէմ հրդեհի (ի ֆԱՐՔԱԺԷՆ)

ԱԼԼԵԱՆՑԱ

Շովային ապահովագր. Ընկ. (ի ձԵՆՈՎԱ)

Սոյն ընկերութեանց Դրամատունն է ի Կ. Պոլիս, Բոքսի Լիօնի

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Հաճօրուլօ խան, Թ. 52—53—54—55—56

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 200

Գալաթա-Սէրայի Լիսէին ԴԻԺ

Գե. Եւ. Շք. օրերը առաւօտեան կանու-

խէն մինչեւ իրիկուան Ժ. 11½

Բե. Գե. Ուր. օրերը ճէն մինչեւ 11½

Երաքի օրերը ժամադրութեամբ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԿԵԴՐ. ԳՐԱՏԱՆ

Ձաճմանքիւր Իլ 64

ԸՆԹԱՑՔ ԸՆԹԵՐՑԻ.— ԴՊՐՈՑԻԳԻՐԲԸ,
Հրատարակուեցաւ Տարր. Լիթ. Բ. տարի
ճիս պատկերներով ու լազմազան յիւթերով
հեղ. 2. էջ. Թրոսեանի. գին 4 դահ.
Դպրոցի պատ. Տնօրէնք օրինակ 5ը ձրի կը
ստանան, 50 փարայ բոսթի ծախք գրկելով:
Ուղղակի Գրատան դիմողներուն կաբեւոր
զեղչ մը տուի:

Վ. Յ. Յակոբեան Անգղ-Հայ Բառգիրքը
որ սպառելու վրայ է, միմիայն յիշեալ գրա-
տունը կը գտնուի. ուր դիմելու ես պէտք ու-
նեցողները.— գին 80 դր:

Ամեն վնասում կանխիկ է:

10—10

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ՅԵՆՈՔՍ ԼՈՆՏՈՆԻ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ, 15/28 Նոյ. 1903

Տ... Լալաթիա, Վիքայիս խան

Պ Պ. Ն. Սուս եւ ընկ. գաղթած ըլ-
լալով Ֆէնիքս Լիթիթրո՝ ապահովագրական
ընկերութեան գործակալութենէն, պատիւ
ստանալով ծանուցանել ձեզի թէ իրազօր ընդ-
հանուր գործակալ անուանուեցայ նոյն ըն-
կերութեան թէ՛ Պոլսոյ եւ թէ գաւառներու
համար. արտօնուած ըլլալով նոյն ընկերու-
թեան կողմէ ապահովագրութիւններ կնքե-
լու հրդեհի դէմ յանուն նոյն ընկերութեան,
եւ տեղւոյն վրայ կարգադրելու եւ վճարե-
լու հրդեհէ առաջ եկած վնասները:

Նոյն ընկերութեան երկար ատենէ ի վեր
ունենած վստահելի եւ ամուր դիրքը, եւ իմ
հար 20 տարուան փորձառութիւնս ապահո-
վագրական գործերու մէջ, երայխաւորու-
թիւններ են թէ լաւ կերպով պիտի մատա-
կարարեմ այն շահերը որոնք ինձի պիտի
յանձնուին յարգելի յաճախորդներուն եւ ընդ-
հանուր հասարակութեան կողմէ:

Ապաստելով ձեր հրամաններուն, կը խնդ-
րեմ որ հաճիք ընդունել, Տիար, իմ ամե-
նախորին յարգանքս հաւատարմօք:

Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ՏՈՒԹ. ՄԱԼԻԱՍԵԱՆ

(ԿԿԱՅՅԱԼ ԲԱՐԻՁԷ)

Մ Ա Ս Ն Ա Գ Է Տ

Կանանց հիւանդութեանց, մանկաբարձ, վիրաբոյժ

Բերայի դարմանատունը փոխադրած է՝ կրկին Բերա Սազըզ Աղան փողոց, Թիւ 26, ուր հիւանդներ կ'ընդունի ամէն օր կէս օրէն վերջ ժամը 1—4 (Ը. Ե.):

Ժամադրութեամբ՝ կէս օրէն առաջ:

Կարօտ հիւանդները կը դարմանէ Բերայի (Սր. Երրորդութեան եկեղեցոյ) Աղքատախնամի դարմանատունը ամէն հինգշաբթի՝ առաւօտէն մինչեւ կէս օր:

Ծանօթ. — Վիրաբուժական, ուղղամարզական (orthopédique), ծննդաբերական եւ ամէն կերպ արգանդի հիւանդութեանց չատկարեւոր գործողութիւնները հնթականերու տուններուն մէջ՝ կատարեալ ապահովութեամբ եւ մեծ յաջողութեամբ կարենալ կատարելու համար՝ գիւտական ամենավերջին մեթոտներու համապատասխանող կատարելագործեալ գործիքներու մանրամասն ամբողջութիւնը հոգացուած է:

ԿԱՐԱՊԵՏ. ԷՖ. ԻԻԹԻԻՃԵԱՆԻ Թարգմանած գիրքերէն հետեւեալները կը գտնուին Պաղտատեան գրատունը եւ մօյրաքաղաքի միւս հայ գրավածառներուն քով.

	հատոր	դր.
Կարմիր մարդոց երգումը	2	10
Ընտանեզուկ	2	12
Փարիզի ամուսնութիւնները	1	5
Թախառկան Հրեայ	4	50
Արուարձանին տղան	3	15
Հանրակառքին տնիքը	1	5
Սկզբունք Գաղ. Տանհսութեան	1	4
Ընտանեկան գողտիքներ	3	15

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ Թ. ԳՍԱԳԱՇԵԱՆ

Հեռագր. Հասցե՝ ԳՍԱԳԱՇԵԱՆ — ԿԻՐԱՍՈՆ

Գնում եւ վաճառում, ներածում եւ արտածում ի հաշիւ:

Բացարձակ պայման՝ կԱՆԽԻԿ:

Յանձնառողչէք պիտի գնահատէ յոճախորդը: Կրկնապատիկ կը տուէ ք եւ է վիսա, որ արդիւնը ըլլայ գարծակալութեան անհոգութեանը: Հրապարակի մասին պահանջուած ծանօթութիւնք փութով կը ղրկուին, եթէ 1 ղրչ. նոց փուլ ներփակուի: Յայտագիրը կը ղրկուի պահանջողներուն իմօղը Դերեք չի վիսաութիւր. ընդհակառակը:

Յ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Ր

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1904 ՏԱՐԻՈՅ ՀԱՄԱՐ

(AGENDA INTERNATIONAL)

Թուրքիէն, Հայերէն, Ֆրանսերէն եւ Յունարէն լեզուներով

Յառաջիկայ 1904 տարւոյ համար նախորդ տարիներէն աւելի ճիշտ եւ աւելի խնամով պատրաստուած եւ արդէն հրատարակուած է:

Պուրգ լաքակազմ.

Ընկիր լաքակազմ

ՈՍԿԵՁՕԾ ՓԱՌԱԿԱԶՄ

Կը գտնուի Պոլսոյ եւ գաւառաց բոլոր գրավանդներու եւ քրթավանդներու քով. Հրատարակիչն է

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ,

3 դր.

5 »

8 »

{ 25 օրինակիւն աւելի գնողներուն զոհացուցիչ գեղջ

ՊԱՅՊԼ ՀԱՌԻՉ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ